

# ԱԶՏԱԿ

## ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

آزتاک جريدته يومية سياسية وأدبية - البوابة للحوار، إيجاباً وروحياً

1500 L.Ո. 76ԳԿ ՏԱՐԻ, ԹԻԻ 131 (21473) ՀԻՆԳՇԱԲԹԻ, 14 ՕԳՈՍՏՈՍ 2003 10 ԷՁ

### ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏՈՎ ՍԸ ՔՆՆԱՐԿԵՅ ԵԼԵԿՏՐՈՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ ԵՒ ԿԱՏԱՐԵՅ ՏՆՕՐԻՆՈՒՄՆԵՐ

Կառավարությունը, նախագահությամբ հանրապետության նախագահ Կոր. Էմիլ Լախուտի և ներկայությամբ վարչապետ Ռաֆիք Հարիրիի, երեկ երեկոյան Թանգարանի իր կեդրոնատեղիին մեջ գումարեց ժողով մը, որուն ընթացքին քննարկումի ենթարկեց ելեկտրակապության ընկերության դիմագրաւած տագնապը եւ նշեալ տագնապը լուծելու վանապան միջոցառումները:

Ժողովին ներկայ գտնուեցաւ նաեւ ելեկտրակապության ընկերության նախագահ Քամալ Հայէք, որ ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Էլուպ Հրմայեանի կողքին ներկայացուց ամբողջական տեղեկագիր մը ելեկտրակապության տագնապին մասին, ինչպէս նաեւ առաջարկեց համապատասխան լուծումներ:

Ժողովէն բացակայեցան նախարարներ Քարամ Քարամ եւ Սլէյման Յրենժիէ:

Կառավարության նիստէն ետք տեղեկատուութեան նախարար Միշէլ Սըմահա կատարեց յայտարարութիւններ, որոնց մէջ շեշտեց, թէ ժողովը, լսելէ ետք Հրմայեանի եւ Հայէքի տեղեկագիրները եւ խորապէս քննարկելէ ետք ելեկտրակապության թղթածրարը տուաւ հետեւեալ որոշումները՝

Ա.- Ելեկտրակապության թղթածրարը փոխանցել պետական պաշտօնէութեան կողմէն քննիչներուն, որպէսզի անոնք կատարեն հարկ եղած վարչական եւ ելեկտրական հետաքննութիւնները, ինչպէս նաեւ ընդհանուր

Շար.ը՝ էջ 10

### ՄՊԱՆՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ԹԻՐԸ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ

### ԲՈՂՈՔԻ ՑՈՅՅԵՐ ՊԱՂՏԱՏԻ, ՊԱՔՈՒՊԱՅԻ ԵՒ ԱՅԼ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Իրաքի մէջ ամերիկացի 2 զինուոր սպաննուած է եւ 3 ուրիշներ վիրաւորուած՝ կարաւաններու վրայ անջատ 2 յարձակումներու ընթացքին, յայտնուած է ամերիկեան բանակը երէկ:

Դէպքերէն մէկը տեղի ունեցած է Պաղտատէն շուրջ 15 քմ. հիւսիս Թաճի մէջ, Երեքշաբթի օր, իսկ միւսը՝ Պաղտատէն հիւսիս Տաուար քաղաքին մէջ, երէկ առաւօտուն:

Երեքշաբթի օր Ռամատի քաղաքին մէջ, իրաքեան մարտաքաղաքէն 110 քմ. արեւմուտք, ամերիկացի զինուոր մը սպաննուած է 2 ուրիշներ վիրաւորուած են:

Մայիս 1էն ի վեր, երբ Սպիտակ Տունը յայտարարած էր, թէ Իրաքի մէջ զինուորական մեծ գործողութիւնները վերջ գտած են, առնուապէս 60 ամերիկացի զինուոր սպաննուած է յարձակումներու ընթացքին, իսկ 62 ուրիշներ մահացած են յարձակումներու հետ կապ չունեցող դէպքերու ընթացքին:

Միւս կողմէ, Պաղտատի մէջ ամերիկեան ուժերու եւ շիիներու միջեւ առաջին բախումի մը ընթացքին իրաքցի տղեկ մը սպաննուած է եւ առնուապէս 4 հոգի վիրաւորուած:

Երէկ բողոքի ցույցեր տեղի ունեցած են մայրաքաղաքին եւ անկէ 60 քմ. հիւսիս գտնուող Պաքուպա քաղաքին մէջ:

Պաղտատի մէջ ցուցարարները կը բողոքեն իրաքեան ազատ ընկերութեան մը շարժումի դեկավար Ալտ Մոհսէն Շալաշի ամերիկեան ուժերուն կողմէ արգելափակման դէմ: Ան 4 օր առաջ ձերբակալուած է:

Շար.ը՝ էջ 10

### «ԺԱՉԻՐԱ» ՀՐԱՊԱՐԱԿԵՅ ՍՍՏՏԱՄԻ ՄԷԿ ԳՐՈՒԹԻՒՆԸ

Քարարի «Ժաչիրա» պատկերասփիռի արքանեակային կայանը երէկ հրապարակեց Իրաքի նախկին նախագահ Սատտամ Հիւսէյնի մէկ ձեռագիր պատգամը: Գրութիւնը կը բովանդակէր Սատտամ Հիւսէյնի պատասխանները լրագրողի մը հարցումներուն, որոնք կը վերաբերէին Իրաքի իշխող խորհուրդի առաջին նախագահ Իպրահիմ ժաֆարի յայտարարութիւններուն: Գրութեան մէջ Սատտամ ողջոյնի խօսք կ'ուղղէ Իրաքի շիի համայնքի բարձրաստիճան կրօնաւորներէն Այաթոլլա Ալի Միսթանիին: Միսթանի նախապէս դժգոհութիւն յայտնած է ամերիկեան ուժերուն կողմէ Իրաքի բռնազրաման առնչութեամբ:

Գրութեան մէջ Սատտամ Իրաքի շիիներուն կոչ ուղղած է սրբապան պատերազմ մղելու ամերիկեան եւ բրիտանական ուժերուն դէմ:

### «ՄԻ. ԱՅ. ԷՅ»Ի ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ Լ. ՂԱՐԱԲԱՂԸ ԿԸ ՆԿԱՏԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԷԿ ՇՐՋԱՆԸ

Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը հաղորդագրութեամբ մը տեղեկացուց, թէ «Մի. Այ. Էյ.»ի վերջերս հրապարակուած (նախապէս գաղտնի դասուած) տեղեկագիրները ցոյց կու տան, թէ վերջին 25 տարիներուն ընթացքին Ուաշինկթըն Լեոնային Ղարաբաղը պաշտօնապէս, ստեւակայն ոչ հրապարակաւ ճանչցած է իբրեւ Հայաստանի պատմական մէկ մասը:

Հրապարակուած տեղեկագիրները, որոնց շարքին են 1970ականներու սկիզբը պատրաստուած վեկուցումներ, կը հաստատեն, թէ ամերիկեան իշխանութիւնները կը գիտակցէին, որ Լեոնային Ղարաբաղը պատմականօրէն հայկական է, թէ Լեոնային Ղարաբաղը միշտ ունեցած է Հայաստանի վերամիանալու օրինական պահանջ, եւ թէ

1980ականներու վերջաւորութեան եւ 1990ականներու սկիզբը հայերու դէմ ազդեցիկ ճանաչական բռնարարները Լեոնային Ղարաբաղի նկատմամբ ազդեցիկ նախապէս արդիւնք չէին, այլ դրսեւորումն էին Ազրբայէյճանի տեղական պաշտօնապէս, ստեւակայն եւ ժողովրդագրական փոփոխութիւններուն, որոնց հետեւանքով շեշտադրուած էր Հայաստանի եւ Ազրբայէյճանի միջեւ կենսականաբար եւ բարգաւաճման տարբերութիւնները:

Վերոնշեալ տեղեկագիրներուն մէջ յատկանշական է 1990ի Օգոստոսին «Մի. Այ. Էյ.»ի մէկ ժամանակագրութիւնը, ուր կը նշուի. «1921-1923» խորհրդային նոր կառավարութիւնը Լեոնային Ղարաբաղը պատմականօրէն Հա-

յաստանի մէկ շրջանը, իբրեւ ինքնիշխան տարածք, կը ներառէ Խորհրդային Ազրբայէյճանի կապմէն ներս:

Կովկասի մասին 1988ին պատրաստած «Մի. Այ. Էյ.»ի մէկ ուսումնական փորձարկը Լեոնային Ղարաբաղը կը նկարագրէ իբրեւ «Հայաստանի մշակութային եւ կրօնական կեդրոն»: Կը նշուի, թէ «դարերու ընթացքին Ղարաբաղ կիսանկախ կարգավիճակ ունեցած է հայ իշխաններու ղեկավարութեամբ, այն պահուն, երբ Հայաստանի միւս շրջանները պարսկական կամ թրքական լուծին տակ էին»:

«Մի. Այ. Էյ.»ի հրապարակուած տեղեկագիրներէ վերոնշեալ մէջբերումները, ինչպէս նաեւ այլ տեղեկագիրներու մէջ բազմաթիւ ակնարկութիւններ կ'ընդգծեն այն իրողութիւնը, որ վերջին 25 տարիներուն ընթացքին Ուաշինկթըն Լեոնային Ղարաբաղը պաշտօնապէս, սոյնիսկ եթէ ոչ հրապարակաւ, նկատած է Հայաստանի պատմական մէկ տարածքը:

### ԱԶՐԳԵՅՃԱՆՑԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ԱՅՍՕՐ ԿԸ ՄԵԿՆԻՆ ԻՐԱԲ

Ազրբայէյճանի պիտի ըլլայ առաջին իսլամ երկիրը, որ զինուորներ պիտի տրամադրէ Իրաքի մէջ Միացեալ Նահանգներու ղեկավարած միջազգային ուժերուն: Ազրբայէյճանի 150 զինուորներ այսօր պիտի մեկնին Քուէյթ, ապա հաստատուելու համար Իրաքի մէջ, առաւելաբար Քերքուքի, Մուսուլի եւ Քարպալայի մէջ շիի համայնքի արքայութիւններուն շուրջ: Ազրբայէյճանի 8 միլիոն բնակչութեան մեծ մասը կը պատկանի շիի համայնքին: Ազրբայէյճանի անկախ միաւորներ, որոնք Իրաքի մէջ ծառայութեան ծախսերուն մեծ մասը պիտի հոգայ Ուաշինկթըն, պիտի գործէ ամերիկեան հրամանատարութեան տակ: Ազրբայէյճան մաս կը կազմէր Ուաշինկթընի կողմէ Իրաքի դէմ պատերազմի նախօրէակին կազմուած դաշինքին:

Միւս կողմէ, Ազրբայէյճանի պաշտպանութեան նախարար Սաֆար Ապիեւ երէկ յայտարարեց, թէ Միացեալ Նահանգներու ծովուծի զինուորականներ եւ Ազրբայէյճանի ծովուծի միաւորներ Կասպից ծովու մէջ սկսած են միացեալ ռազմափորձերու, կարգացնելու համար Կասպիցի մէջ քարիւղի արտադրութեան ենթակառուցներու անվտանգութեան երաշխաւորումը:

Միացեալ այս ռազմափորձերը կը ֆինանսաւորուին Ազրբայէյճանի տրամա-

դրուող 4 միլիոն տոնայարի ամերիկեան ռազմական օժանդակութեան միջոցով:

### ԱԿԵԱՐԿ

### ՈՐԵՒԷ ՄԻՉՈՑ

Ազրբայէյճանի խորհրդարանական, նորանշանակ վարչապետ եւ նախագահութեան թեկնածու Իլիամ Ալիեւ կը յայտարարէր, որ որեւէ միջոցով Ազրբայէյճան վճճած է վերագրուել Լեոնային Ղարաբաղը:

Ազրբայէյճանի նախագահական ընտրութիւններու թեկնածուն անշուշտ նախ պիտի փորձէր յաշտ արեւմտեան աշխարհին ներկայանալ իբրեւ յաղաղասէր եւ արցախեան հակամարտութեան նկատմամբ բանակցութիւններու ճամբով լուծումի յանգելու կողմնակից քաղաքական անձնաւորութիւն. միաժամանակ սակայն, ազրբայէյճանական անբոյսի պայքարի արժանապատուութեան նկատմամբ յանձնառու կեցումով որդեգրած նախագահական թեկնածու:

«Որեւէ միջոց»ը այս պարագային անէլի ռազմափորձերէն պատգամներ կը ներփակէ յատկապէս վճճաշեշտ ոճով՝ յայտարարութեան ժամանակահատուածի եւ նախընտրական իրավիճակի նկատմամբ:

Հայկական ճակատի վրայ, Ազրբայէյճանի վարչապետին տարած նախագահական ընտրաքառային այս յայտարարութիւններուն անուղղակի պատասխանը կու տար Լեոնային Ղարաբաղի Ազրբային ժողովի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ Վահրամ Աթախանեան, երբ կը հաստատեց, որ Իլիամ Ալիեւի վարչապետ նշանակումով ոչ մէկ բարեփոխում պիտի արձանագրուի Լեոնային Ղարաբաղի տագնապի լուծման ծիրին մէջ: Արցախի քաղաքական պաշտօնատարին այս յայտարարութիւնը կը բացառէր բնականաբար նաեւ ազրբայէյճանական «ամէն միջոց»ի տրամաբանութիւնը: Մասնաւոր, որ այս առիթով անէլի յստակ կը դարձնէր առ հասարակ Ազրբայէյճանի նախագահական արդիւնքները որեւէ ձեռով չկապելու Արցախեան հակամարտութեան լուծման գործընթացին:


Այս պարագային լռելեայն հասկացողութիւնը այն է, որ ազրբայէյճանական յաղափայ իշխանութեան որեւէ տարբերակ, ներառեալ՝ երէկեան իշխանաւոր ղախներուն տիրած եւ այսօրեան ընդդիմադիր դաշտը ողողած քաղաքական քաղաքատարներու վերադարձը, ի վիճակի պիտի չըլլայ հակամարտութեան լուծման համար պարտադրելու ազրբայէյճանական մտեցումը. իսկ ասիկա՝ թեկուզ «ամէն միջոց»ի օգտագործումով:

«Ա.»

### ՊԸՐՆՁ ՊԱՂԵՍՏԻՆՅՑԻ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐՈՒ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵՅ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Միացեալ Նահանգներու Միջին Արեւելքի ներկայացուցիչ Ուիլիամ Պըրնս կ'երէկ Ամմանի մէջ յայտնած է, թէ հակառակ բիրտ արարքներու արձանագրած նորագոյն մագլցումին, Ուաշինկթըն վճճած է ամէն գնով գործարքել Միջին Արեւելքի խաղաղութեան ճամբու քարտէսը:

Պաղեստինեան իշխանութեան վարչապետ Մահմուտ Ապպաւի եւ պաղեստինցի այլ պաշտօնատարներու հետ տեսակցելէ



ետք, Պըրնս թղթակիցներու յայտնած է, թէ Մ. Նահանգներ յանձնառու են Միջին Արեւելքի մէջ խաղաղու-

թեան հաստատման, խոստովանելով, որ խաղաղութեան գործընթացը «շատ դժուար է»:

Շար.ը՝ էջ 10

### ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԷՋ ԲԱՑԱՌԻԿ ԱՌԻԹ ԶԱՏՈՒԿ ԳԻՆԵՐՈՎ ԾԱԽՈՒ ԵՆ.-

### ԱՐԻՆ - ՀԱՄԱԼԻՐ

- ▶ Խանութներ 30 եւ 40 քառ. մեթր
- ▶ Սրահներ 175 եւ 200 քառ. մեթր



### ԱՐԱՊԱՍԵՐ ԾԷՆԵՐ

- ▶ Խանութներ 30 եւ 50 քառ. մեթր
- ▶ Մթերանոց 300 քառ. մեթր

### ԱՅԷՏԻ ԾԷՆԵՐ

- ▶ Գրասենեակ 80 քառ. մեթր

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 03 / 618806 թիւին:





ԱՄԱԿ ԱՆՅՈՒՆԻՔԸ

ԶԳՎՍՍԱՅՈՒՄ

Պատահականորեն հանգիպեցայ իրեն, փողոցի վրայ: Վարդուհի է անունը: Ընդամենը տասը վայրկյան խօսեցանք: Շատ կարճ հին օրերուն մասին: Ասելի երկար ցերեկային ու քիչ մըն ալ երկրի վիճակին մասին:

Երեւի բառասուռի մէջ կից է արդէն, սակայն, իր պատմած ծանր ու դժուար օրերուն պատմառով շատ աւելի մեծ կ'երեւի: Սպանիա փոխադրուած է, ուր ամէն տեսակի գործեր կը կատարէ պահեւոր համար ընտանիքը, այստեղ:

Ռուբեն Հասկերտեանի «Աւազոյն տղերքը հեռանում են» երգին նկատմամբ միշտ ալ վերապահութեամբ մտածեցի: Ինչու՞ ու նստեցի: Երբ մնացողները, ինչու՞ անոնց հայրենիքին կառչած մնալու իրողութիւնը ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն գուցակցեցնէ «լուսազոյն»ներէն չըլլալու միտքին հետ, նոյնիսկ երգի մը մէջ, երգ մը, որուն աչք տողերը յանախ կը վկայակոչուին, յանախ կը հնչեն ամէնէն տարբեր առիթներով:

Վարդուհին, սակայն, իրօք լուսազոյններէն էր, խիզախներէն, քաջերէն: Մասնագիտութեամբ օդանավի մէջ ծառայող էր, սակայն, Արցախի մարտամարտի առաջին շրջանին, երբ լաչիներ տակաւին կը բաժնէր Հայաստանը Ղարաբաղէն, հայ լուսազոյն օդաչուները, իրենց գործակիցներով, «Նաք-քառասուն» փոքր տիպի օդանավերով եւ ուղղաթիւներով գնէր, զինամթերք էր, բժշկական օգնութիւն, վիրաւորներ ու դիակներ կը փոխադրէին, կեանքի կամուրջը կարելի դարձուցած էին, ի դէմս մեծ վտանգներու:

Յուզումով ողջագուրուեցայ Վարդուհիին հետ՝ ամբողջ ժամանակաշրջանի մը յիշողութեան գիրկը իյնալով, գոնէ վայրկեանի մը համար:

Վարդուհին հիմնականին մէջ խօսեցաւ իր ընկերներուն մասին, այն օդաչուներուն, որոնք «Հայկական ախալովիներ»ու անպատասխանատու կառավարման պատճառով այսօր անգործ մնալու դատապարտուած են ուրեմն, իրենք ալ հեռանալու պարտադրանքը պիտի ապրին ուշ կամ կանուխ: Կարծես անոնց կարիքը այլեւս պիտի չունենանք, կարծես առաւել վարպետ օդաչուները մեր ազգին համար աւելորդ ու անպիտան մարդիկ դարձած են: Իսկ եթէ դարձեալ պատերազմի երթալու պարտաւորուիք, ո՞ր պիտի գտնենք այդ մարդոց:

Լայնատարած բարոյալքման ուրուակները կ'անհանգստացնէ շատերը, նաեւ՝ զիս: Անցեալի հերոսներուն նկատմամբ մեր խիստ սահմանափակ ուշայրուիքները, զոհուածներու ընտանիքներուն միշտ անբարար օժանդակութիւնը, պատերազմէն մարմնապէս թէ հոգեպէս հաշմուած ամբողջ զանգուածի մը նկատմամբ անող անտարբերութիւնը ի՞նչ, հետեւեալ պիտի ունենայ հետագայ ազգային որեւէ ճգնաժամ դիմագրաւելու ատեն:

Վարդուհիի նմաններուն հեռացումը առաւել ցաւ կը պատճառէ, անշուշտ: Այս հանգիպումը բաւական ծանր հոգեկան վիճակի մատնեց զիս: Վերջերս, գիտակցաբար, հաւանաբար առողջական նկատառումներով, խուսափած եմ տխրութիւն յառաջացնող հանգիպումներէ ու տեսարաններէ: Հայաստանի մէջ տակաւին ամէն քայլափոխի կարելի է նման կացութեան մէջ գտնուիլ:

Ամառուան արձակուրդները բազմաթիւ ընկերներ կը բերեն Երեւան ու ես ամէնաւել կը դիմաւորեմ իրենց «Ջուրաբոց»ի առաւել վատ կառավարուող օդակայանը: Մաքստան աշխատողներուն շարունակուող նենգութիւններն ու ամառային տաք ալ աւելի կը բարդացնեն վիճակը ու իսկապէս յոյսս կը մնայ յաջորդող օրերու երկրային կախարհաքններուն վրայ, որոնք պէտք է այցելուներուն յիշողութեան շնչեն անաչջին տխուր փորձառութիւնները:

«Տակաւին» բառին վրայ զննելով շեշտս՝ կ'ուզեմ պահել լուսատեսութիւնս: Կը տեսնեմ հիմքերը այդ լաւին, որ պիտի գայ: Ուղղակի անհամբեր եմ, ինչպէս անհամբեր եմ իմ բազմահազար զգակիցներս, որոնք ժամանակ չունին սպասելու: Հիմա՞ է իրենց պէտք այդ լաւը, որպէսզի անտեղի չտառապին իրենք ու իրենց գաւազները:

ԱՐՈ ՊՈՂԻԿԵԱՆ

ԼՈՒՐԵՐ ՆԱՅԱՇԽԱՐՏԷՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՎԱՀՐԱՄ ՆԵՐՍԻՍԵԱՆՅԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԳԵՍՊԱՆ ՏԱՆԻԷԼ ՖՐԻՏԻ ՀԵՏ

Հայաստանի նախագահի տնտեսական հարցերու զինուոր խորհրդական Վահրամ Ներսիսեանց 6 Օգոստոսին Սպիտակ Տան մէջ հանդիպեցաւ Միացեալ Նահանգներու Ազգային ապահովութեան խորհուրդի Եւրոպայի եւ Եւրասիոյ գծով աւագ տնօրէն, Միացեալ Նահանգներու նախագահի յատուկ օգնական, դեսպան Տանիէլ Ֆրիտի Հետ:

Հանդիպման ընթացքին Ներսիսեանց մանրամասնօրէն ներկայացուց Հայաստանի տնտեսական քաղաքականութեան հիմնական ուղղութիւնները եւ Հայաստանի տնտեսութեան զարգացման ցուցանիշները ու առկա միտումները: Անդրադառնալով Հայաստանի տնտեսական զարգացման մարտահրաւէրներուն, Ներսիսեանց նշեց տեղական եւ արտասահմանեան ներդրողներուն երկարաժամկէտ վարկեր տրամադրող ծրագրի ստեղծման անհրաժեշտութիւնը: Այդպիսի ծրագրի մը առկայութիւնը կը խթանէ Հայաստանի մէջ փոքր եւ միջին ձեռնարկութիւններուն զարգացումը:

Գնահատելով Հայաստանի յառաջընթացը տնտեսական բարեփոխումներու իրականացման եւ սեփական մարզի զարգացման ուղղութեամբ, դեսպան Տ. Ֆրիտ նշեց ուղղակի արտասահմանեան ներդրումներու ծառայի անհրաժեշտութիւնը՝ իբրեւ Հայաստանի իշխանութիւններուն կողմէ առաւել ուշադրութիւն պահանջող ռազմավարական ոլորտ: Այս ծիրի մէջ քննարկուեցան Հարաւային Կովկասի շրջանային տնտեսական համագործակցութեան զարգացման հեռանկարները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԸ Կ'ԱՅՅԵԼԷ ԼՈՒՐԻ ՄԱՐԶ

11 Օգոստոսին Հայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար, «Լինսի» հիմնադրամի կառավարման խորհուրդի համակարգող Արտաշէս Թումանեան Լոս Անջելէս քաղաքի մարզային կոնսուլ Վահրամ Ներսիսեանի հետ համագործակցութեան շրջանակներում ընթացքին:

Հայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավարին կ'ընկերակցէին «Ալէքսի Գոտի», «Մշակոյթ» եւ «Ճանապարհաչինութիւն» ծրագրերներուն տնօրէնները:

Հիւրերը, Լոս Անջելէսի Գոտիի Գոտիի Գոտիի հետ, այցելեցին Սպիտակի կեդրոն-2 եւ կեդրոն-3 թաղամասերը, Վանաձորի Շարլ Ազնաւուրի անուան մշակոյթի պալատ եւ Ստեփանաւանի Չախափնայթ թաղամաս: Այցելութեան աւարտին Ա. Թումանեան ծանօթացաւ Սպիտակ-Գիւմրի փապուղիի շինարարութեան աշխատանքներուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՇԽԱՆ Կ'ԱՅՅԵԼԷ ՖՐԱՆՍԱ

Ֆրանսայի Հանրապետութեան Մերակոյտի նախագահ Քրիսթիան Փոնսլէ պաշտօնական նամակով մը Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արթուր Պաղտասարեանին հրաւիրած է Ֆրանսա:

Նշելով Ֆրանսեւհայկական յարաբերութիւններու եւ երկու երկիրներու օրէնսդիր մարմիններու միջեւ կապերու ամրապնդման ու զարգացման կարեւորութիւնը, Քրիսթիան Փոնսլէն Հայաստանի Ազգային Ժողովի նախագահին հրաւիրած է Փարիզ՝ «քննարկելու Ֆրանսեւհայկական համագործակցութեան հարցերն ու հեռանկարները»:

Ըստ Ազգային Ժողովի Մամուլ գրասենեակին, Ազգային Ժողովի նախագահի Ֆրանսա պաշտօնական այցելութիւնը տեղի պիտի ունենայ աշնան:

«ՆՊԱՍՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՄԱՅ» ԾՐԱԳԻՐԻՆ ՀԱՄԱՐ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻՆ ԿԸ ՅԱՏԿԱՅՈՒԻ 15 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ

Վերջին քանի մը տարիներուն Հայաստանի կառավարութիւնը մարզերուն մէջ կ'իրականացնէ «Նպաստ աշխատանքի դիմաց» ծրագրեր, որով ժամանակակերպ աշխատանքով կ'ապահովուին գործ փնտրելու կեդրոններուն մէջ արձանագրուած Հայաստանի քաղաքացիները:

Հայաստանի պետական պիտուծէն Արագածոտնի մարզին այս տարի յատկացուած է 15 միլիոն դրամ: Այդ գումարին շրջագծին մէջ համայնքները իրենց ծրագրերը պիտի ներկայացնեն գործ փնտրելու տարածքային կեդրոններուն: Այս կեդրոններուն եզրակացութեան հիման վրայ մարզային համապատասխան յանձնախումբը պիտի վաւերացնէ այդ ծրագրերը եւ աշխատանքները պիտի սկսին: Իսկ համայնքները ընդհանրապէս կը նախատեսեն բարեզարգումի, կոյուղիներու մաքրութեան, կանաչապատման եւ մասնակի վերանորոգութեան աշխատանքները:

Արագածոտնի մարզպետարանի առողջապահութեան եւ ընկերային ապահովութեան վարչութեան պետի տեղակալ Կարէն Շահազիզեանի համաձայն, ծրագրերը պիտի գործէ մինչեւ տարեվերջ, իսկ այդ ժամանակամիջոցին նախատեսուած գումարը իր նպատակին չծառայելու պարագային, սահմանուած կարգին համաձայն պիտի վերադարձուի:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԵԳԻՊՏՈՍ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 10ԱՄԵԱԿ

Այս տարուան աշնան կ'ամբողջանայ Եգիպտոս - Հայաստան բարեկամական ընկերութեան ստեղծման եւ գործունէութեան 10ամեակը: Այս առիթով կազմակերպութիւնը կը նախատեսէ յատուկ ձեռնարկ մը կազմակերպել Երեւանի մէջ:

Այս ընկերութիւնը հիմնադրուած է 1993 թուականի աշնան խումբ մը Եգիպտոսահայերու կողմէ, որոնք շարքին են նաեւ հայ մշակոյթի եւ գիտութեան անուանի գործիչներ Գոնար Գասպարեան, Պերմ Զէյթունցեան, Նուպար Պէլլէրեան եւ ուրիշներ:

Ընկերութեան նախագահ Սահակ Թագոյեան նշեց, որ անցեալ տարի տարիներուն ընթացքին կազմակերպութիւնը զգալի ձեռքբերումներ

ներ ունեցած եւ իրագործած է իր առջեւ դրուած բոլոր նպատակները: «Հայ - եգիպտական բարեկամութեան խումբը հոգիի մղումով, կարելիութեան եւ ժամանակի սահմաններուն մէջ, ըրած է ամէն ինչ՝ իր նպատակը իրականացնելու համար եւ եգիպտացի ժողովուրդներու յարաբերութիւններուն»:

Կազմակերպութիւնը ամէն տարի 23 Յուլիսին ձեռնարկ կը կազմակերպէ Եգիպտոսի ազգային տօնին առիթով: Անկէ զատ, բազմաթիւ հանդիպումներ կազմակերպուած են եգիպտացի արուեստագէտներու եւ գիտնականներու հետ, ինչպէս նաեւ դասախօսութիւններ տրուած են Եգիպտոսի մասին: Իրագործուած են նաեւ մշակութային այլ ծրագրեր, Հայաստանի մէջ կազմակերպուած են եգիպտական մշակոյթի օրեր, հրաւիրուած են պարի խումբեր եւ մշակոյթի գործիչներ:

ԲԱԼԽՅՈՐՆԻՈՅ ԱՈՈՂՋԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԴԻՄԱՐԱԿԻՆ ԱՐԺԵՒՈՐՈՒՄՈՎ ՄԻՇԸՆ ՀԻԼԶԻ «ԱՐԱՐԱՏ ՏՈՒՆ»Ը ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԱՐԺԱՆԱՅԱԻ

Միշն Հիլզի «Արարատ տուն»ը ամէն տարուան նման այս տարի եւս Քալիֆորնիոյ Առողջապահութեան հիմնարկին կողմէ քննութեան ենթարկուեցաւ: Առողջապահութեան հիմնարկը 26 Յունիս 2003ին իր եզրակացութիւնը ներկայացուց՝ «Արարատ տուն»ը զնահատելով իբրեւ նահանգին մէջ գործող լաւագոյն հիմնարկներէն մէկը: Քննութեան իբրեւ արդիւնք կարելի չէ եղած որեւէ մէկ թերութիւն գտնել «Արարատ տուն»ը գործունէութեան մէջ: Յայտնենք, թէ անցեալ տարի «Արարատ տուն»ը եւ անոր ընդհանուր հաստատութիւնը՝ Իկլըր Ռաքի կեդրոնը Քալիֆորնիոյ Առողջապահութեան հիմնարկին կողմէ դատուած էին նահանգի լաւագոյն 20 հիմնարկներուն շարքին:

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ 100ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՐԵԿՈՅ ԹԵՀՐԱՆԻ ՄԵՁ

Թեհրանի հայ մարզաշահութային «Արարատ» կազմակերպութեան սրահին մէջ տեղի ունեցած է կազմակերպութեան պարախումբին տարեկան ելոյթը՝ նուիրուած Արամ Խաչատրեանի ծննդեան 100ամեակին: Հայրենի պարուսոյց, վաստակաւոր արուեստագէտ Կարինէ Ղազարեանի ղեկավարութեամբ ներկայացուած ծրագրին մէջ ընդգրկուած էին պարեղանակներ Արամ Խաչատրեանի, ինչպէս նաեւ Չաչըրվսբի, Կոմիտասի, Շուպէրի, Երանեանի եւ այլ հեղինակներու ստեղծագործութիւններէն:

Հայկական ժողովրդական եւ ազգագրական պարերէն զատ, կատարուած են նաեւ լեհական, իրանական, ռուսական եւ սպանական պարեր: Ըստ «Արթ» թերթին, ձեռնարկին ներկայ եղած են Թեհրանի հայոց թեմի առջնորդ Սեպուհ արք. Սարգիսեան, Իրանի մէջ Հայաստանի դեսպանատան եւ ազգային մարմիններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ՝ հայերու եւ իրանցիներու հոծ բազմութիւն մը:

ԹԻԻՖԵՆԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ Կ'ԸՆԴԱՅԻՆԵՐԻՆ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏԱՆՔԸ

Թիբեթեան ընկերութեան պանդոկային երկրորդ համալիրը 3 Օգոստոսին հիւրընկալեց Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանը:

Համալիրի տնօրէնին խօսքերով, Գեղարքունիքի մարզի Մափաթաղ գիւղին մէջ տեղակայուած «Մարաք» պանդոկային այցելուները եւ սփիւռքահայեր են, եւ հայաստանաբնակներ: Սեանի այս փոփոխութիւնը պայմանաւորուած է թէ՛ համեմատաբար մեղմ բնակիմասկան պայմաններով, անտառային գոտիի առկայութեանը, թէ՛ ալ Մափաթաղի բնակչութեան գործազրկութեամբ:

Նշենք նաեւ, որ Թիբեթեաններու պանդոկային առաջին համալիրը կառուցուած է 2001ին, Երեւանի Նոր-Մարաշ թաղամասին մէջ:

«ՄԱՐԴԱՅԻՆ ԻՐԱՒԱՆՅ ԴԵՏ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՊԱՐԳԵՒՍԱՐԱԾ Է ՄԱՐՔ ԳՐԻԳՈՐԵԱՆԸ

Հայ լրագրող Մարք Գրիգորեան պարզեւտրուած է «Մարդկային իրաւանց դէտ» (Հիւլմըն Ռայթ Ուոչ) կազմակերպութեան կողմէ: Ան շարքին է 13 երկիրներէ 28 լրագրողներու եւ գրողներու, որոնք 2003ին ստացած են «Հելման/Համէթ» դրամաշնորհ:

Վ. ՕՍԿԱՆԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՆՅԱԳՐԻՈՎ 1000ՐԳ ԱՅՅԵԼՈՒՆ

11 Օգոստոսին Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան ընդունեց Մազմանեաններու ընտանիքը: Ընտանիքի մայրը՝ Սոսի Մազմանեան, ելեկտրոնային անցագրով Հայաստան մտնող 1000րդ այցելուն էր: Մազմանեանները Հայաստան կ'այցելեն առաջին անգամ եւ նշեցին, որ ելեկտրոնային էջի մէջ ներառուած են բոլոր մանրամասնութիւնները, ինչ որ բաւական կը դիւրացնէ զբոսաշրջիկներու Հայաստան մուտքը:

ԱՒԻԿ ԻՍԱՀԱԿԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ ԻՐ ՄԵԾ ՀՕՐ ԱՊՐԱԾ ՏՈՒՆԸ ԺԸՆԵՒԻ ՄԵՁ

«Արմէնփրէս» կը տեղեկացնէ, թէ Աւետիք Իսահակեանի թո՛ղք՝ հայրենի գրականագէտ եւ գրող Աւիկ Իսահակեան վերջերս Հ.Բ.Ը.Մ.ի կողմէ ժընեւ հրաւիրուած էր՝ տեսնելու համար իր մեծ հօր տունը: Այդ տունը, ուր 1915-1921 ապրած եւ ստեղծագործած է հայ մեծ բանաստեղծ Աւետիք Իսահակեան, շատ քիչերուն ծանօթ է: «Ժընեւի Պրեւո Մարթին փողոցի 53րդ շէնքին մէջ վեց տարի ապրած եւ ստեղծագործած է իմ պապս», րոտ է Աւիկ Իսահակեան «Արմէնփրէս»ի թղթակիցին Երեւան վերադառնալէ ետք՝ աւելցնելով, թէ ցաւօք այդ շրջանին Աւետիք Իսահակեան աւելի մտորումներ կատարած ու թախծած է, քան՝ ստեղծագործած:

Balkan Holidays TRANSLITEX TOURS ԴԵՊԻ ՎԱՌԱՆ ԵՐՁԱՊՏՈՅՆՆԵՐՈՒ 36 ՏԱՐՈՒՆ ՓՈՐՉԱՌՈՒԹԻՒՆ Varna Summer 2458 սկսնայ Balkan Holidays VARNIA EXPERT NO. 1 Look after No. 1, Let No. 1 Look after you. CORNICHI MAZRAA WAKF ROUM CENTER - BANK AUDI TEL.: 1/304553 - 304563 FAX: 9611/310424 BEIRUT - LEBANON

ՆԱՍԻՐ

ԱՆԻՄԱՍ ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐ

Թուրքիոյ եւ Կիպրոսի հիւսիսային գրաւեալ բաժնի միջեւ մաքսային համաձայնութեան մը ստորագրութիւնը անգամ մը եւս փաստեց, որ Թուրքիա քաղաքական փութկոտ ու միակողմանի քայլերու ախոյեան մըն է: Եւ ոչ միայն. այս համաձայնութեան ստորագրութիւնը կը հանդիսանայ 30 տարիէ ի վեր Կիպրոսը գրաւեալ վիճակի մէջ պահելու ապօրինութեան շարունակուող մէկ ողբերգական երեսը:

Կարելի է Անգարայի այս քայլը քաղաքականապէս հասուն բնորոշել, պահու մը, երբ Թուրքիա Եւրոպական Միութեան իր անդամակցութիւնը կարգաւորելու հետեւեալով, Եւրոպական զինուորական խումբի տակ կը փորձէ բարեկարգել քաղաքական իր ամբողջ համակարգը՝ սկիզբէն նոր երկիր մը կազմելու պարտադրանքին եւնթարկուած հարկադրանքով:

Անկախ դժգոհութիւն պատճառով այս երեւոյթէն, ստորագրուած համաձայնագիրը երկու կողմերէն բնորոշուեցաւ իբրեւ «համաձայնագիրի ընդհանուր շրջագիծ»: Կը թուի թէ այս բնորոշումը դիւանագիտական դարձուածքի մը արդիւնք է, ի տես Եւրոպական Միութեան Թուրքիոյ անդամակցութեան դիմաց դրուած նախապայմաններուն ու ակնկալութիւններուն:

Թուրքիոյ կողմէ համաձայնագիրը ստորագրող նախարարին մեկնաբանութիւնը, թէ՛ «այս կերպով թրքական Կիպրոսի տնտեսութիւնը պիտի կապուի միջազգային տնտեսական համակարգին», առնուազն քաղաքականապէս միամիտ բացատրութիւն մըն է, որ ոչ գրաւեալ Կիպրոսը կը զօրացնէ, ոչ ալ Կիպրոսի օրինաւոր հանրապետութեան համակարգին մէջ խաղաղութեան եւ գործնական լուծման ապագայ գործընթացին կրնայ նպաստել:

Ինչ ալ ըլլայ, այս համաձայնութիւնը անիմաստ քայլ մըն է: Թուրքիա փաստօրէն համաձայնութիւն ստորագրեց ինքզինքին հետ...

«ԱՉԱՍ ՕՐ»

ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ՝ «ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ»Ի ԻՔ. ՀԱՏՈՐԻՆ

Երեքշաբթի, 29 Յուլիսի երեկոյեան ժամը 7:00ին, Հայկազեան Համալսարանի հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ «Հայկազեան Հայագիտական Հանդէս»-ի ԻՔ. հատորի շնորհահանդէսը:

Ներկայ էին Համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փոլ Հայտոսթեան, վերապատուելիներ, վարդապետներ, ներկայ եւ նախկին երեսփոխաններ, եւ բազմաթիւ գրասէրներ: Հանդէսի պատասխանատու քարտուղար Անդրանիկ Տագէսեան վարելով հանդիսութիւնը հրաւիրեց «Հանդէս»-ի պատասխանատու խմբագիր հայր Անդրանիկ Մ. վրդ. Կոստանը, որ փոխանցէ իր խօսքը:

Հայր Կոստան խօսեցաւ հայագիտութեան մասին՝ զայն նկատելով Սփիւռքի մէջ Հայապահպանման լծակներէն մէկը: Բնորոշելով Հայկազեան Համալսարանի առաքելութիւնը վարդապետը նշեց, թէ գիտութիւնն ու հայապահպանումը անոր բազմակողմանի առաքելութեան տարբեր երեսներն են: Հայագիտութիւնը գիտելով իբրեւ «մեր ազգին մտաւոր յիշողութեան մասը» եւ գնահատելով այդ կապակցութեամբ եղած ձեռքբերումները, վարդապետը նշեց, թէ՛ «հայագիտութիւնը պիտի չբաւարարուի միայն անցեալով... հայագիտութիւնը ժամանակակից գիտութիւն ըլլալու է»: Ապա ան յիշեցուց խմբագրութեան սկզբունքները՝ «մնալ բժախնդրի եւ խստապահանջ», շարունակել հանդիսանալ «հայրենիքի եւ Սփիւռքի գիտականներուն միջեւ զօղը»:

Ապա խօսք առաւ վեր. դոկտ. Փոլ Հայտոսթեան, որ «Հայագիտական Հանդէս»ը նկատեց Համալսարանին «պարծնանք»՝ ուսումնասիրութեան մարզին մէջ: Նախագահը վերահաստատեց Համալսարանին յանձնառութիւնը՝ «նորոգուած ուժգնութեամբ սատարելու հայագիտական աշխատանքներուն», եւ անձամբ իր ու խնամակալութեան անունով գնահատեց խմբագրական կազմին նուիրումն ու աշխատանքը՝ մաղթելով, որ «Հանդէսը շարունակէ օրինակելի մնալ իր որակով, քննական-գիտական մեթոտով եւ բովանդակութեան հայաշահ հարստութեամբ»:

Յայտագիրին աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, ինչպէս նաեւ ցուցադրութիւն՝ Համալսարանի հայագիտական գրադարանի վերջերս ձեռք բերած եւ ստացած գիրքերուն:

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՇԽԱՐՀԷՆ

Շարունակուած՝ 4րդ էջէն

«Իսկ մենք գիտենք, թէ որքան ողբերգական ու ծանր էր այդ տարիներուն Հայաստանի, հայ ժողովուրդի եւ յատկապէս հայ մտաւորականներուն վիճակը՝ Եղեռն, համատարած վտարանդիութիւն, մենակութիւն. կարծես հեռուէն հայրենիքի նկատմամբ, հայրենիք մը, որը այրող ու խոշտանգող կրակներու մէջ էր»:

Սակայն, ըստ Աւելի Իսահակեանի, վարպետը այդ շրջանին թէեւ քիչ, բայց այնուամենայնիւ ստեղծագործած է, գրած է իր նշանաւոր «Հայդուկի երգեր» բանաստեղծութիւններու շարքը, որ Հայ Գուեստան կեղծանունով հրատարակած է Հ. Յ. Գ. պաշտօնաթերթի «Դրօշակ»ի մէջ, որ իրեն համար եղած է իր հալածական հայրենիքին խորհրդանիշը, եւ որուն միջոցով բանաստեղծը իրականացուցած է իր նամակագրական կապը հարգատներուն հետ: Այցելելով իր պապին ապրած տունն ու «Դրօշակ»ի խմբագրութիւն՝ Աւելի Իսահակեան ժրնեւէ մէջ գործող նորակառոյց հայկական միակ եկեղեցիին դահլիճին մէջ հանդիպում ունեցած է նաեւ Զուրաբեանի հայ համայնքի անդամներուն հետ եւ դասախօսած՝ Աւետիք Իսահակեանի կեանքին ու ստեղծագործութեան, մասնաւորաբար՝ անոր գործունէութեան ժրնեւեան շրջանին մասին:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՊՕՂՈՍ ԳՈՒԲԵԼԵԱՆԻ «ՓՏԱԽՏ» ՎԷՊԸ

Լոս Անճելեսի մէջ հրատարակուեցաւ սփիւռքահայ բեղուն արձակագիր Պօղոս Գուբելեանի նոր հատորը՝ «Փտախտ»:

Այս վէպը կը բաղկանայ 272 էջերէ, ուր հեղինակը կը ներկայացնէ սկիզբէն իսկ ստեղծագործական իր աշխարհը յուզող Ափրիկէն, եւ յատկապէս՝ Կերա Լեմոն կոչուած ափրիկեան փոքր հանրապետութիւնը:

Երկու գիրքերէ բաղկացած «Փտախտ» վէպին սկիզբը, հեղինակ Պօղոս Գուբելեան վէպի աշխարհագրական վայրին մասին ընդհանրացում մը կատարելով, կ'ըսէ, թէ՛ «Փտախտ»ը հասցէ ու հայրենիք չունի:

Տիեզերքն է անոր թատերաբեմը եւ մարդու ախտաւոր հոգին՝ զայն սնանողն ու յաւերժացնողը...»:

Այս բնորոշումով իսկ, հեղինակը կը հաստատէ, թէ փոխաբեր կամ մարդկային հոգիին ախտաւոր վարակը, բոլոր ժամանակներու եւ բոլոր վայրերու մէջ տարածուած ցաւ է:

Յիշենք, թէ Պօղոս Գուբելեանի ցարդ հրատարակած գործերն են՝ «Ափրիկեան ափերու վրայ», «Ափրիկեան համաճար», «Անտառը մարդուն մէջ», «Պայթում լուծ թնդանթններու», «Ողջոյն յաւերժական Լիբանան», «Յրիուէյ» (վիպակ), «Merci Beaucoup սասպեթական Յրանսա», «Փասփորթ» (վէպ): Թարգմանութիւններ՝ «Ափրիկեան պատմութեան ճանապարհ», «Այգիներն եւ ուռեւերն»: «Փտախտ»ը հրատարակուած է «Ապրիլ» հրատարակչութեան կողմէ:

ՍԵՐՈՒԺԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՅՈՒՑԱՀԱՆԴԷՍԻ ԲԱՅՈՒՄ

Հայաստանի ժողովրդական արուեստի թանգարանի մէջ վերջերս բացուած կատարուեցաւ նկարիչ Սե-

րուժան Յովհաննիսեանի «Հայաստան» քարեղէն իմ հրաշք» խորագիրը կրող ցուցահանդէսը:

Հայաստանի ժողովրդական արուեստի թանգարանի անօրէն Սարո Սարոխանեան նշեց, որ Մերուժան Յովհաննիսեան մասնագիտութեամբ ճարտարագէտ - մեքենագէտ է, ան նկարչական համապատասխան կրթութիւն չունի եւ նկարել սկսած է ընդամէնը երկու տարի առաջ:

Ցուցահանդէսին ներկայացուած էին Մերուժան Յովհաննիսեանի վերջին երկու տարիներուն եւ յատկապէս՝ 2002 թուականին կատարած աշխատանքները: Հայաստան՝ քարեղէն իմ հրաշք» ժողովածուին մէջ գետեղուած է 60 բնանկար: Նկարներուն հիմնական նիւթը Հայաստանի ժայռերու աշխարհն է, ուր ի յայտ կու գայ «պազայթէ արեւ» Ամբերդի կիրճում», «Արալի լեռը Սաղմոսավանքից», «Արագածի լանջին», «Արգնի, ջրվէժ» եւ այլ բնանկարներու ընդմէջէն:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՄԱՐԻՆԷ ԱԼԵՍԻ ՆՈՐ ՍԿԱՒԱՌԱԿԸ

Սեպտեմբերին պիտի հրատարակուի Մարինէ Ալէսի հեղինակային երգերու նոր սկաւառակը՝ «Մտորումներ», Շուշան Պետրոսեանի կատարումով: Սկաւառակը կ'ընդգրկէ 14 երգ, որոնցմէ 9ը՝ նոր, գրուած Շուշան Պետրոսեանի համար, իսկ 5 երգ արդէն ձայնագրուած են Մարինէ Ալէսի նախորդ սկաւառակներու մէջ՝ «Ինքնահեռացում», «Իմ բարդի», ինչպէս նաեւ «Քարէ անձրեւ» («Սթոն Բէյն»):

Մարինէ Ալէսի եւ Շուշան Պետրոսեանի ստեղծագործական համագործակցութիւնը սկսած է 1999ին, «Միայնակ եմ ես այս մեծ աշխարհում» երգով: «Դա առաջին երգն էր, որ դուրս եկաւ տնային կատարման սահմաններից», կը յիշէ Մարինէ Ալէս:

Երկրորդ սկաւառակին մէջ, ընդգրկուած է երկու երգ Շուշանի կատարութեամբ՝ «Կիսակեանք» եւ «Աստղային քարուսէլ»:

«Քարէ անձրեւ»ը յուշանուէրային սկաւառակ է: Այդ երգը Մարինէ Ալէս սուրբաբան է 11 Սեպտեմբեր 2001ին Միացեալ Նահանգներուն մէջ տեղի ունեցած ոճերային յարձակումներուն:

ԵՐԵՒԱՆԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ Կ'ԱՒԱՐՏԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ

«Լինսի» հիմնադրամին միջոցով մայրաքաղաքի փողոցներու բարեկարգման եւ մշակութային կեդրոններու նորոգման աշխատանքները կ'ընթանան ըստ ժամանակացույցի եւ պիտի աւարտին նշուած ժամկէտին, այս տարուան Հոկտեմբերին:

Այս մասին Երեւանի քաղաքապետարանին մէջ տեղի ունեցած քննարկումին ընթացքին յայտարարեց հիմնադրամի «Ճանապարհահիմնութիւն» ծրագրի տնօրէն Էտուարտ Բեգոյեան:

www.hamazkayin.com

CANCER

DNAի n՝ր հիւլէն էր խնդրեցաւ կարեց կապը եւ անխորհուրդ սլացաւ միջոցին մէջ ու նոր կապով հանգչեցաւ Մայրու Նարեկը գրկած Մարիամին հետ կը խօսի...

Խնդր հիւլէն հմայուած նոր հիւլէնը մոլորած էլան դաշտը շուրջապարի մէկը միւսին ուս րուած մէկը միւսին գիրկն ընկած քաղցնեցան իրար վրայ գլորտեցան իրար մէջ եւ սահմաններն անտեսած դարչան աշխարհ մ'անյարիր երկար շարան յուլունքի Մարիամ Չուսկը գրկած մօրս աղօթքը կը լսէ

Կազմուեցաւ առաջին օրար բջիջը մարմնիս մէջ ... բջիջը հուր խլիրդի եւ անհանդարտ բջիջն այս հեզնեց օրէնքը բնութեան խելակորոյս հետի մէջ ան կիսուեցաւ, կիսուեցաւ կազմեց աշխարհ մ'անձանօր Մօրս աղօթքը միմունց՝ երեքին մէջ փշրեցաւ...

Կը ցանկայի եւ րեսնէլ խիզախ բջիջը այդ խելառ որ հարազատ մարմնին, պարզեց որջ պայքարի... Մանրադիպակ սեղանին լոյսի շեղքեր խաչաչեւ անցան մէջէն բջիջին եւ գուժեցին լուրը սեւ... Եւ աղօթքը ստեղծաւ մօրս թոռնած շրթունքին

Իսկ խաղը մեծ այս յիմար դեռ պիտի խաղանք մենք երկար մարմնիս ու ես իրարմէ հաշունդուն կնք հաշունեմ

Պիպի կոռիմը յարապիւս պակերազմինք միմնէս որ հորիզոնը չստեղծ ծագող լոյսը արեւի

Տարօրինակ խաղ է այս... հեզնա՛նք է լոկ այս կեանքին

Կաղապարը իմ եսի, որ գգուեցի րարիներ Էսրեմաքս սնուցի հիմա դարչաւ հիւրընկալ բջիջներուն խմբում որոնք հպարտ խմբերով սեւ գերանիմ վեր պարզած դարչան եսս հրկիզող մեծ ռիսերի՛ մ'ընամի...

Մարիամ գրկեց մօրս գլուխը յոգնած արեկ արցունքը շորցած... մինչ Նարեկը մօրս ծունկին բաց մնաց...

ՀՐԱՆԳ ՄԱՐԳԱՐԵԱՆ

22 Յուլիս 2003 - Քանկըրս, Նիւ Եորք

ԳԵՔԻԱԹ ՀԱՅԱՍՏԱՆ - 3 ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԵԶՄԿԻ ՇՐՋԱՊՏՈՅՏ ԴԷՊԻ ՄԱՅՈՍՏԱՆԻ ԴԷՊԻ ԱՐՅԱՆ 8 ՍԵՊՏԵՄԲԵՐԸ 21 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003 Շրջապտոյտի առաջնորդ՝ ՕՆՆԻԿ ԳՆԹԱՐԵԱՆ ՌԻՐՈՇ Է ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԹՍՄԱՐԻ ԸՆԿԵՐԱԿՅՈՒԹԵԱՄԲ 7 ՕՐԵԱՅ ԵՒ 14 ՕՐԵԱՅ ԵԶՄԿԻ ՅԱՅՏԱԳՐԵՐ ԱԽԹԱՄԱՐ ԸՆԿ. 01/ 260850 - 03/ 586337 | ANSER TRAVEL 01/ 562044 - 01/ 562870

Կրթական նախկին նախարար ԱՊՏԸԼ ՌԱՀԻՄ ՄՐԱՏԻ վկայութիւնը ՓՕԼԻԿԼՈԹ ՔՈԼԷՃԻ 30-ամեակին առթիւ «...Լիբանանի մէջ թեքնիք ուսման ճամբուն վրայ մեծ է ՓՕԼԻԿԼՈԹ ՔՈԼԷՃԻ ներդրումը: Այս գոյէճի արձանագրած յաջողութիւնը ինքնին աղաղակող փաստ է, թէ ՓՕԼԻԿԼՈԹ ՔՈԼԷՃ 30 տարուայ ընթացքին յաջողած է իր առաքելութեան մէջ եւ շահած նախարարութեան ամբողջական վստահութիւնը: 30ամեակին առթիւ, որպէս կրթական նախարար կը շնորհաւորեմ շրջանաւարտները եւ քոյէճի հիմնադիր-տնօրէն պրն. Պետրոս Շեմմէսեանը...»: Խօսուած՝ Ուրբաթ, 12 Յուլիս, 2002, վկայականաց բաշխման հանդէսի ընթացքին

# ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՂՈՒՄ

Լիբանանեան կեանքի երևոյթներ

## ԼԻԲԱՆԱՆՅԻ ՅԱՃԱԽՈՐԴԸ՝ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՈՂԸ

Բոլոր երկիրներու եւ ժողովուրդներու մէջ, ընդունուած եզր է այն հասկացողութիւնը, թէ յաճախորդը միշտ իրաւունք ունի, մնալուն կերպով ճիշդ է եւ անոր հետ պէտք է վարուել մեկնելով այս սկզբունքէն:

Յառաջադէմ երկիրներու մէջ յաճախորդին իրաւունքները լիովին կը յարգուին եւ վաճառատները կամ աշխատակողները անոնց հետ կը վարուին ամենայն յարգանքով եւ համբերութեամբ: Վաճառատներուն եւ առեւտրական հաստատութիւններուն մէջ յաճախորդը տէրն է, եւ անոր դիմաց պէտք է դրուին այլազան ընտրութիւններ: Առանց կասկածելու կամ տատամսելու, ան պէտք է գնումներ կատարէ եւ ուրախ ու գոհ տրամադրութեամբ տուն վերադառնայ: Մէկ խօսքով, գնում կատարելը հաճոյք պէտք է պատճառէ յաճախորդին եւ ոչ թէ ըլլայ պարտականութիւն ու անհրաժեշտութիւն:

Լիբանանի մէջ պարագան նոյնը չէ, հակառակ անոր որ այս առնչութեամբ աշխատանքներ կը տարուին եւ նոյնիսկ գործնական յատուկ դասընթացներ կը կազմակերպուին: Համայնարաններուն մէջ այս նիւթը կը դասաւանդուի եւ անիկա հիմնական տեղ կը զբաղէ առեւտրի առնչուող մասնագիտութիւններուն մէջ, որովհետեւ տեսական գետնի վրայ մարդիկ կը հաւատան, թէ յաճախորդը գոհացնելը կը հանդիսանայ աշխատանքի հեջազ րնթացքին հիմքը, սակայն գործնական գետնի վրայ եւ շուկաներուն մէջ այս սկզբունքը կարճ ժամանակամիջոցի մը համար գործադրուելէ ետք կը դադրի հնչելու ու ազդու ըլլալէ:

Յաճախորդներուն իրաւունքներուն ծիրը բաւական ընդարձակ է եւ կ'ընդգրկէ գանազան մարզեր՝ սկսելով արտադրութիւններու պատրաստութենէն մինչեւ անոնց ներկայացման ձեւը, անոնց հասողութիւնը յաճախորդին, գնողներուն եւ մեծ հաստատութիւններուն ու վաճառատներուն կապը, որուն մէջ զլիաւոր տեղ կը զբաղէ ապրանքներուն որակը, գինը եւ առողջարար ըլլալը, ինչպէս նաեւ գնումներ կատարելու յատուկ դիւրութիւնները, ընտրանքները, տրուած նուէրները եւ ծանուցումներուն ձեւերը:

Միջազգային չափանիւններով յաճախորդին իրաւունքը մարդոց իրաւունքներու ընկերային եւ տնտեսական ծիրին մէջ իր տեղը ունի: Այս իրաւունքներուն կարգին նշուած է, թէ յաճախորդը պէտք է գնում կատարելու դիւրութիւններ եւ հանգստակէտ պայմաններ ունենայ, ապրանքներուն վրայ դրուած գիները սերտորէմ ըլլան, իսկ տուրքերը արդար ըլլան եւ համապատասխան են քաղաքացիներուն եկամուտին:


Յատկանշական է, որ առեւտրական հաստատութիւններուն եւ վաճառատներուն մէջ կատարուած ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, թէ լիբանանցիները իրենց եկամուտին 34 առ հարիւր կը տրամադրեն ուտելիքներու գնումին: Յստակ է, թէ տոկոսային այս պատկերին մէջ նկատի չեն առնուած ոչ տարրական ուտելիքներն ու չիմբի հաճոյքին համար սպառուած ուտեստեղէնները: Փաստօրէն լիբանանցիներ իր եկամուտին 34 առ հարիւր կը տրամադրեն իր ընտանիքին տարրական պարուտը ապահովելու համար, մնաւանդ որ վերջին շրջանին աւելցած տուրքերուն եւ գիններուն բարձրացումին պատճառով մարդիկ նոյն գումարով սկսած են նուազ ապրանք գնել:

Լիբանանի մէջ յաճախորդներուն իրաւունքներուն ուշադրութիւն դարձնելու եւ գանոնք գոհացնելու առնչութեամբ աշխատանք տանելու գործընթացը շատ հեռու է արդիական եւ գոհացուցիչ ըլլալէ: Արդարեւ, այս առնչութեամբ մշակուած վերջին ծրագիրը ինքնին արդէն շատ հին ու ժամանակավրէպ է եւ ներկայի պայմաններուն չի յարմարիր: Փաստօրէն, անոնք վերջին անգամ լրջօրէն մշակուած եւ տնտեսութեան նախարարութեան կողմէ սերտուած են 40 - 50ական թուականներուն, երբ այս մարզը մեծ աճ ու զարգացում կ'արձանագրէր:

Յաջորդող տարիներուն աննշան փորձեր կատարուած են այս մարզը բարելաւելու եւ յաճախորդներուն իրաւունքները վերատեսուածեան ենթարկելու, սակայն այս փորձերը մեծ ազդեցութիւն չձգեցին լիբանանեան շուկային վրայ, որովհետեւ անոնք կը վերաբերէին որոշ տեսակներու, ինչպէս 2000ին գինիի վերաբերող որոշումի մը հրապարակումը:

Այսօր գոյութիւն ունին կարգ մը օրէնքներ, որոնք եթէ իսկապէս զործողութիւն կրնան որոշ փոփոխութիւններ ներմուծել ներկայ կացութեան մէջ, ինչպէս՝ ծխախոտի ծանուցումները արգիլելու որոշումը, արտադրութեան մը գիները բոլոր վաճառատներուն մէջ նոյնացնելու վերաբերող օրէնքը, ուտելիքներուն գինները նուազագոյնին իջեցնելու եւ կարելի եղածին չափ անոնց վրայ տուրքեր չընդունելու առաջարկը, որոնք օրինքնաբերուած են, սակայն ժամանակի ընթացքին մոռացութեան ենթարկուելով՝ գետնուած են նախարարութիւններուն դարակներուն մէջ:

Յաճախորդներու իրաւունքներուն կարգին են նաեւ սնունդներն ու արտադրութիւնները մաքուր եւ առողջապահական կերպով պատրաստելը եւ անոնց վրայ պետական հսկողութիւնը, որ որոշ ժամանակաշրջան մը մեծ թիւփ կ'առնէ, իսկ աւելի ուշ կը մարի: Լիբանանի մէջ այս մարզին վրայ դրուած հսկողութեան բացակայութեան պատճառով յաճախակի դարձած են թունաւորումները եւ փճացած ուտելիքներու վաճառքը, որոնք համար հսկող յատուկ յանձնարարներ մը կազմուած են ր անողջապահութեան նախարարութեան կողմէ եւ անիկա մնալուն կերպով կը քննէր թուականները, պատրաստութեան ձեւերը, առողջապահական չափանիւնները ամբողջակեցնելը եւ այլն, սակայն այսօր այդ



յանձնարարներին ճակատագիրը յստակ չէ եւ անիկա բացակայ է լիբանանեան շուկայէն:

Մասնուցումներու եւ քարոզչական արշաւի մարզերը եւս պէտք եղած ձեւով չեն դասաւորուած Լիբանանի մէջ: Անոնց վերաբերող օրէնքն ու որոշումը արդիական մեթոտներու եւ սկզբունքներու հիման վրայ չեն դրուած: Քանտայի, Յըրանայի եւ յառաջադէմ այլ երկիրներու մէջ յատուկ օրէնքներ եւ որոշումներ կան ծանուցումներուն մասին: Այդ օրէնքներն ու որոշումները կ'արգիլեն յաճախորդը խաբելու կամ գայն շուկայի բեցնելու, ինչպէս տարածուած սովորութիւն է Լիբանանի մէջ: Լիբանանեան կայաններէն սփռուող ծանուցումներն ու մայրուղիներուն վրայ գետեղուած պատուները երբեմն ուղղակի շփոթի կը մատնեն անցորդներն ու քաղաքացիները: աննախընթաց նկատուող առիթները իրողական գետնի վրայ գարմանքի եւ անակնկալի կը մատնեն արագօրէն վաճառատուն ուղղուող յաճախորդները եւ այս ձեւով առիթները կը վերածուին բեմադրուած խաբէութիւններու: Վերջին քանի մը տարիներուն մեծ տարածում գտան քանի մը արտադրութիւն միացուցած ծրարները, որոնք կը յատկանշուին մէկ արտադրութիւնը նուէր տալու «բարիքով»: Սակայն շատ յաճախ երեւան կ'ելլէ, թէ այս արտադրութեան թուականը շատ մօտ է իր աւարտին կամ անորակ է եւ, փաստօրէն, որոշ ժամանակաշրջան մը չվաճառուելուն պատճառով նուէր տրուած է կամ ծրարին գինը այնքան բարձրացած է, որ արդէն յաճախորդը անուղղակիօրէն կը վճարէ ճիշդին հրամցուող ապրանքին գինը: Մեծ ճարտիկութեամբ վաճառականները այդ շրջանին կը բարձրացնեն տուեալ արտադրութեան գինը եւ յաճախորդը, երբ ստուգէ առանձին վաճառուող արտադրութեան գինը ու բաղադատութիւն կատարել, կը կարծէ, թէ իսկապէս շատ լաւ ընտրանք է այս ծրարը գնելը:

Վաճառատներն ու մեծ հաստատութիւնները ընդհանրապէս կը յայտարարեն, թէ իրենք պատրաստ են ընդունելու յաճախորդներուն բողոքները, դժգոհութիւնները եւ առաջարկները: Կարգ մը մեծ վաճառատներ նոյնիսկ յատուկ գրասենեակներ հաստատած են այս նպատակին համար: Անոնք տեսականօրէն շատ լաւ կը գործեն, սակայն շատ յաճախ գործնական գետնի վրայ այնքան կը զգուցեն յաճախորդն ու կը յոգնեցնեն գայն, որ վերջին իր բողոքէն հրաժարելով դուրս կու գայ գրասենեակէն՝ ինք գէշ զգալով: Ուսումնասիրութեան խօսքերը բաժնեւէր դիւրին ու մատչելի է բոլորին, սակայն գործնական քայլեր առնելու առնչութեամբ տատամսումներ եւ նիւթը այլ ձեւով ներկայացընելու «ճարտիկութիւններ» ի գործ կը դրուին՝ փոխանակ շիշ մը փճացած կաթը կամ մածոնը ուրիշով մը փոխարինելու: Յաճախորդը յարգելու եւ անոր հոգատարութիւնը ստանձնելու դասընթացներու հետեւած այս աշխատակողները խորքին մէջ իրենց պարտականութիւնը կը կատարեն, սակայն՝ իրենց ոճով եւ «հոգածութեան» ձեւերով:

Ընկերային եւ տնտեսական դժուար պայմաններուն բերումով այսօր քաղաքացին սկսած է զիջումներ կատարել եւ լաւագոյնին փոխարէն լաւ գնել: Այս մէկը առիթ կու տայ ընկերութիւններուն միջեւ մրցակցութեան, իսկ գինները, որակի կողքին, երբեմն այնքան կը նուազին, որ յաճախորդը կը խուսափի գայն գնելէ, որովհետեւ կասկածի տակ կ'առնէ անոր առողջարար ըլլալը:

Այլ պատկեր մը կը պարզուի հազուատեղէն վաճառող հաստատութիւններու մէջ, ուր յաճախորդը իսկապէս կը յարգուի այն վարկեանին, երբ մուտք կը գործէ վաճառատուն, վաճառորդները մեծ հոգատարութեամբ կ'ընդառնեն յաճախորդին, ցոյց կու տան իրենց վաճառատան պարանքները, սակայն հազուադէպ, որ յաճախորդը կ'ընտրուի տրամադրութիւն չունի, կը սկսին անտարբերութեամբ վարուել անոր հետ՝ առանց նոյնիսկ պատասխանելու անոր հարցումներուն: Երբեք յաճախորդը խանութէն դուրս կու գայ անարգուած եւ սխալ մը գործած ըլլալու զգացումով:

Ճաշարաններուն եւ հանրային վայրերուն մէջ եւս յաճախորդին հետ վարուելակերպը կը տարբեր անոր ապսպրած ուտելիքներէն, անոր վճարելիք գումարէն, անոր տուած կողմնակի նուէրներէն եւ այլն: Այս պարագաներուն գրօսաշրջիկները աւելի յարգուած են քան լիբանանցիները, որովհետեւ վերջիններս այդքան ալ վարժ չեն հոս տեղի ունեցող խաղերուն: անոնց նկատմամբ աւելի մեծ հոգատարութիւն կը ցուցաբերուի եւ աւելի լայն խաբերակութիւններ կը գործադրուին:

«Յաճախորդին իրաւունքը յարգուած է Լիբանանի մէջ» նախադասութիւնը, յաճախ կը լսուի պետական անձնաւորութիւններու, պատասխանատուներու եւ վաճառականներու կողմէ, սակայն այս մէկը պէտք է հասկնալ հաստատումը կատարողներուն հասկացողութեան եւ մօտեցման կերպին համաձայն:

Պատրաստեց ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ

# ՍՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ

Առողջ Մնալու Գաղտնիքները

## ՊՏՈՒՂՈՎ ԵՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆՈՎ ԴԻՄԱԴՐԷ ՍՏԱՄՈՔՍԻ ՔԱՂՅԿԵՂԻՆ

Ստամբուլի քաղցկեղը ի յայտ եկաւ աւելի քան մէկ դար առաջ: Բժիշկներն ու սննդագէտները կ'ըսեն, թէ քաղցկեղի առաջնորդող գանազան պատճառներ կան, որոնցմէ մէկն է անբաւարար եւ ոչ սննդարար ուտելիքներ ուտելը: Ստամբուլի քաղցկեղը կը նկատուի այն վտանգաւոր հիւանդութիւններէն, որոնք մահուան կը տանին: Ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, թէ օրական հերթականութեամբ պտուղ եւ բանջարեղէն ուտելը կը նուազեցնէ ստամբուլի քաղցկեղի ունենալու հաւանականութիւնը: Ուսումնասիրողներ կ'ըսեն, թէ ստամբուլի քաղցկեղը պահուող զլիաւոր տարրը «Սի» կենսասնիւթն է: Պտուղներն ու բանջարեղէնները իրենց մէջ կը պարունակեն նաեւ այլ տարրեր, ինչպէս՝ պեթաքարոթէնը, որ մեծ դեր կը խաղայ քաղցկեղի հաւանականութիւնը նուազեցնելու մէջ:



### ԿԱՂԱՄԲԸ

Ուսումնասիրութիւններ ցոյց տուած են, թէ կաղցկեղէն բաղադարած միւս բանջարեղէններուն, շատ աւելի կարողութիւն ունի դէմ դնելու ստամբուլի քաղցկեղի վտանգին: Անոնք, որոնք օրական երեք քառորդ գաւաթ հում կաղամբ կամ երկու դգալ եփած կաղամբ կը սպառեն, մեծ տոկոսով

խմբը: Օրական երեք գաւաթ կանաչ թէյ խմելը արդէն բաւարար է ստամբուլի քաղցկեղի վտանգը պարտապանելու քաղցկեղէն: Երեք գաւաթ կանաչ թէյ իր մէջ կը պարունակէ մօտաւորապէս քառասունէն յիսուն միլիգրամ «Սի» կենսասնիւթ:

### ՍՈՅԱ ԼՈՒԲԻՆՅԻ ԱՊՈՒՐԸ

Ճափոնի մէջ կատարուած ուսումնասիրութիւն մը ցոյց տուած է, թէ օրական հերթականութեամբ մէկ պնակ սոյա լուբինայի ապուր ուտողներուն քով վաթսուն տոկոսով նուազած է ստամբուլի քաղցկեղի ունենալու վտանգը: Բժիշկները կը շարունակեն ըսելով, թէ շաքարեղէն չորս անգամ սոյա լուբինայի ապուր ուտելը կը նուազեցնէ ստամբուլի քաղցկեղին վտանգը տղամարդոց մօտ 17 առ հարիւրով, իսկ կիներուն մօտ՝ 19 առ հարիւրով:

### ՍՈՏԻՍԸ, ՄԻՍՆ ՈՒ ԸՄՐՈՒԸ

Պէտք է ուշադիր ըլլալ մեծ քանակութեամբ աղուտելէ, որովհետեւ ստամբուլի քաղցկեղին հաւանականութիւնը: Պէտք է հեռու մնալ նաեւ ստամբուլի քաղցկեղէնէն, որովհետեւ անոնք մեծ քանակութեամբ աղ կը պարունակեն, ինչ որ վնասակար է առողջութեան: Այդ կը գրգռէ ստամբուլը եւ կը բորբոքէ գայն, ինչպէս նաեւ կ'աւելցնէ այն բջիջներու վտանգը: Երբեք հաւանականութիւն ունին քաղցկեղէնի բջիջներու վտանգը: Այդ նաեւ կը նուազեցնէ այն տարրերուն ուտը, որոնք կը պարունակեն քաղցկեղի դէմ: Ուսումնասիրողներ կ'ըսեն, թէ կաղին վտանգը շատ աւելի կ'աւելցնայ անոնց մօտ, որոնք բանջարեղէն եւ պտուղ չեն սպառու:

### ՊՐԱՍԸ ԵՒ ՍՈՒՆԸ

Օրական մէկ սոխ ուտելը կը նուազեցնէ ստամբուլի քաղցկեղին վտանգը: Չանազան ուսումնասիրութիւններ ցոյց կու տան, թէ մեծ քանակութեամբ սոխ ուտողներուն միայն քառասուն առ հարիւր ստամբուլի քաղցկեղ կ'ունենայ: Ուսումնասիրողները կ'ըսեն, որ այս երեքը նոյն արդիւնքին կը հասնին կամ նոյն դերը կը կատարեն ստամբուլի քաղցկեղին վտանգը նուազեցնելու մէջ:

### ԹԷՅԸ

4730 հոգիի վրայ ուսումնասիրութիւն մը կատարուեցաւ Ճափոնի մէջ: Արդիւնքը ցոյց տուաւ, թէ այն անհատները, որոնք օրական հերթականութեամբ թէյ կը խմեն, շատ աւելի նուազ հաւանականութիւն ունին ստամբուլի քաղցկեղ ունենալու, քան անոնք, որոնք թէյ չեն

ԲԱՐԱ ԵԱՐՏԸՄԵԱՆ



# Կնոջական

## SOLERS - ԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

### Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՏՕՆԸ ԵՒ ԽԱՂՈՂՈՐՀՆԵՔ

Ս. Աստուածածնի տօնը մեր եկեղեցույ հինգ տաղարաններն սելկն է, որ կը գուգադիպի 15 Օգոստոսի մօտիկ Կիրակիին:

Աստուածածնի համաձայն, Քրիստոսի Համբարձումն էտք, Ս. Կոյս Մարիամը 15 տարի ապրեցաւ Երուսաղէմի մէջ, Յովհաննէս Աւետարանիչի որդիական խնամքին տակ: Այնուհետեւ Ս. Կոյսը խաղաղ ու հանգիստ մահ մը ունեցաւ: Քրիստոսի առաքելները մեծ երկիր-դաժութեամբ անոր մարմինը ամփոփեցին Գեթսեմանի ձորակին մէջ:

Թաղման ժամանակ կը բացակայէր հայոց առաքել Բարթողիմէոսը, որ իմանալով Աստուածամոր վախճանունը՝ շտապեց Երուսաղէմ եւ փափաքեցաւ անպայման տեսնել զայն վերջին անգամ ըլլալով: Բոլորը իջան թաղման վայրը եւ բացին գերեզմանը, ուր չկար Ս. Կոյսին մարմինը: Այս իրողութենէն եզրակացուցաւ, որ Քրիստոս իր խոստումը կատարելով՝ մայրը երկինք փոխարձակ է: Հետագայ դարերուն (9 - 12րդ դարեր) եկեղեցույ հայրերը, աւանդութեան համաձայն, հաստատեցին Ս. Աստուածածնի տօնը:

Պատարագի աւարտին խաղող կ'օրհնուի եւ կը բաժնուի ժողովուրդին: Նախքան խաղողը բաժնելը՝ կը կարդացուի Գիրք Աւետարան եւ Ներսէս Շնորհալի կաթողիկոսին յօրհանած աղօթքը: Այս աղօթքին մէջ կաթողիկոսը կը խնդրէ Աստուծոյ օրհնութիւնը՝ խաղողի ողկոյզներուն եւ զանոց ճաշակողներուն համար, որպէսզի արժանի դառնան մեղքի թողութեան եւ դառնան առողջ՝ մտքով եւ հոգիով:

Աստուծոյ օրհնութիւնը կը հայցուի նաեւ պտուղ բերողներուն եւ կը խնդրուի, որ անոնք արժանի դառնան երկինքի վարձատրութեան:

Աղօթքէն ետք 3 անգամ կ'օրհնուին ողկոյզները եւ կը բաժնուին ժողովուրդին:

Խաղողը կ'օրհնուի, որովհետեւ ամէն մէկ պտուղի օրհնութիւնը առանձին-առանձին կատարելը երկար արարողութիւն է, իսկ խաղողը կը նկատուի պտուղներէն ազնուագոյնը՝ իբրեւ ուրախացող գինիի հիւր, իբրեւ հաղորդութեան խորհրդանշան: Քրիստոս եւս յաճախ ինքզինքն անանուցած է խաղողի որթի, Յովհաննէս Աւետարանիչը «ճշմարիտ որթատունկ» կոչած է Յիսուսը (ԺԵ. 1): Խաղողը կը քաղուի (այսինքն կը գոհուի) եւ ետքը կը ճմլուի, իսկ ստացուած հիւրը կ'ենթադրուի կը դարձնէ մարդ արարածը: Հին ժամանակ վերքերը կը լուսայն գինիով: հիւանդին քիչ մը գինի տալով՝ կը վերականգնէին ուժերը, նոր կեանքի կը կանչէին զայն...

Ս. պատարագի արարողութիւնը առանց գինիի չի կատարուիր, որովհետեւ Քրիստոսը երկրային կեանքի վերջին ընթրիքին ժամանակ գինիի կենսունակութիւնը հաստատեց՝ իրեն հաւատարմողներուն հաղորդակից դարձնելու միջոց մը նկատելով զայն: Յառաջիկայ Կիրակի Ս. Աստուածածնի եւ խաղողօրհնէրի տօնն է...

## ՆՈՐԱԳԻՐ

### ՊՐՈՔՈՒԼԻՈՎ ԿՐԱԹԵՆ



- Բաղադրութիւն՝ 4 անձի համար.
- 1 բլիս պրոքրիլի (կանաչ ծաղկակաղամբ)
- 40 կրամ կարագ
- 30 կրամ ալիւր
- 4 կս լիթր կաթ
- 50 կրամ տաշուած կրիւլէր պանիր
- Ազ, փոշի պղպեղ
- Պատրաստութիւն:

Պրոքրիլի պոտիկ կտորներու վերածել, լուալ եւ 10 վայրկեան պահել աղի եռացած ջրով մէջ:

Կաթսայի մը մէջ հալեցնել 30 կրամ կարագը, հետը լուծել ալիւրը, աւելցնել պղպեղը, աղը, համեմել եւ սեւաբար խոտնէր, մինչեւ որ թանձրանայ:

Կրակին վրայէն հանել հոք, աւելցնել տաշուած կրիւլէրին կէսը: Փայրէքս ամանի մը մէջ դնել պրոքրիլները, վրան թափել թացանը, երեսը ցանել մնացեալ պանիրը եւ կարագին կտորը, փուռին մէջ 5 վայրկեան եփել երեսը կարմրելու աստիճան եւ հրամցնել տաք վիճակի մէջ:

## ՄԵՐ ԶԱՒԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

### ԶԱՒԱԿՍ ՔՄԱՀԱՃ Է Ի՞ՆՉ ԸՆԵՄ...

#### ՎԱՆՐԱՆԱՆՈՒԹԸ ՄԻՇՏ ՊԱՀԱՆՉՆԵՐ ՈՒՆԻ...

Տուրմ, շաքար, խաղաղիք... յաճախ մանուկները պահանջներ ունին, եւ չստանալու պարագային կու լան, կը պոռան, մինչեւ իսկ գետին կը պռկին, որպէսզի ի վերջոյ ծնողները տեղի տան չխայտառակելու մտահոգութեամբ:



Այս կացութեան մէջ չգտնուելու եւ մանուկին մէջ այս գիծը չզարգացնելու երկու միջոց կայ. կամ այն է, որ հանրախանութի պիտի չտանինք մեր զաւակը, կամ ալ տունէն չմեկնած՝ անոր յստակօրէն պէտք է բացատրենք, որ հանրախանութի կ'երթանք ո՛չ թէ իր ուզածները գնելու, այլ՝ տան անհրաժեշտ գնումները կատարելու:

Եթէ պատահի, որ ան մտնայ ըստաւածը եւ վերադառնայ իր պահանջներուն, երբեք պէտք չէ աեղի տանք: մեր կողմէ նուազագոյն վաճառուածը նոր գէնք մըն է անոր ձեռքին մէջ, հետեւաբար պէտք է ըլլանք անգիջող եւ հաստատ մնանք մեր որոշումին վրայ:

#### ՎԵՐՄԵՐ ԲԱՐԵՒ ՏԱԼ...

Կրնայ ըլլալ, որ մեր

զաւակը ամչկոտ է եւ կամ «ոչ» ըսելու տարիքին մէջ է (մէկուկէսէն երեք տարեկան):

Քաղաքավարութիւնը կը սորվինք, հետեւաբար ժամանակ տանք անոր, որպէսզի սորվի օրինակ ծառայելով անոր:

Այսպէս, իր ներկայութեան բարեւեմը մեր դրացիին, չէնքին պահակին, թաղի նպարավաճառին, իր ուսուցչուհիներուն, դպրոցի ընկերներուն... Ամէն առտու նաեւ բարեւեմը իրեն եւ ժամանակ տանք, որ ընթացքը փոխէ:

#### ՎԵՐ ՊԱՀԱՆՉԵ, ԻՆՉ ՈՐ ՔՈՅՐԸ ԿԱՄ ԵՂԱՅՐԸ ՈՒՆԻ...

Քրոջ եւ եղբոր միջեւ նախանձը բնական է եւ անխուսափելի, մանաւանդ՝ եթէ անոնք տարիքով շատ մօտ են իրարու:

Երբ մեր զաւակները նոյն խաղաղիքին շուրջ վիճին, չմիջամտենք, այլ ձգենք, որ իրենք լուծեն իրենց հարցը, որպէսզի մեր կարգին անարդար չըլլանք մէկուկէսէն կամ միւսին նկատմամբ: Միջամտենք միայն այն պարագային, երբ զիրար կը ցաւցնեն կամ կը վնասեն:

Պէտք չէ վարանինք մեր զաւակներին մէկուկէսէն գնելու բան մը, որուն պէտք ունի, իսկ միւսին՝ ոչինչ: Միւսը պէտք է հասկնայ, որ պէտք չէ մրցի իր քրոջ կամ եղբոր հետ, այսօր ան բան մը ստացաւ, ուրիշ օր մըն ալ ինք կրնայ ստանալ. այսպիսով, ան պիտի վարժուի ընկերութեան մէջ մտնելու եւ անհասարակութիւններն ու անարդարութիւնները դիմագրաւել:

#### ՍԵՆՏԻՄԵՆՏԱԿԱՆ ՍԻՆԱՆՆԵՐԸ

Մեր զաւակէն աւելի ըստը չպտուանք, այլ ջանանք լաւ օրինակ ծառայել անոր:

Զգարները կամ ֆիզիքական պատիժներ չսահմանենք զբարձրագուստ զաւակին: Չունենաւ ստացնենք, չվիրաւորենք մեր զաւակը՝ անոր մէջ բարոյցներ չարմատացնելու համար:

## ԿԻՆ ԴԵՍԵՐ

### ՄԱՐՈՔԻ ՍԱԼՄԱ ԹԱԳՈՒՂԻՆ



Մարոքի պատմութեան մէջ աննախըմտաց երեւոյթ... թագուհին առաջին անգամ ըլլալով պաշտօնական ելոյթ ունեցաւ իր ամուսինին՝ Մոհամէտ վեցերորդին կողքին ընդունելով Փաքիստանի նախագահն ու կինը:

Դէտերու կարծիքով, ասիկա կ'ապացուցէ, որ թագաւորը կը յարգէ կնոջ դերը եւ դիրքը ընկերութեան մէջ եւ նախանձախնդիր է, որ իր կինը տեսնուի եւ խօսք ունենայ զանազան հարցերու մասին:

Մարոքցիները, իրենց կարգին, շատ կը սիրեն եւ հպարտ են իրենց թագուհիով, որ արդիական ըլլալով հանդերձ, չ'ոտնակոխեր աւանդութիւնները եւ կրցած է իր մէջ հաւասարակշռել արդիապաշտութիւնն ու աւանդութիւններուն կառչած մնալու երեւոյթը:

### ՍՈՒՐԻՈՅ ԱՌԱՋԻՆ ԿԻՆԸ՝ ԱՍՄԱ ԱՍԱՏ

Սուրիոյ Առաջին տիկինը՝ Ասմա Ասատ, այս տարի մեծ շուքով տօնեց «Երեխայի օր»ը Սուրիոյ մէջ՝ պահանջելով, որ հանդիսութիւնները երկարին ամբողջ շաբթուան մը վրայ եւ ընդգրկեն Սուրիոյ բոլոր քաղաքները:

Ասմա Ասատ ընկերային եւ մարդասիրական իր այլազան գործունէութեանց կողքին յատուկ կարեւորութիւն կու տայ երեխաներուն, որոնք երկրին ապագան կը ներկայացնեն: Այս առիթով կազմակերպուեցան զիրքի եւ զձագրութեան ցուցահանդէսներ: Ասմա Ասատ անձամբ ներկայացաւ եւ զանազան անակնկալ հանդիպումներ ունեցաւ մանուկներուն հետ, որոնք



փափաքեցան հետը լուսանկարուիլ: Առաջին տիկինը այս նախաձեռնութիւնը մեծապէս գնահատուեցաւ ժողովուրդին կողմէ, մինչ այդ այս տօնը իրրեւ սովորական օր անշուք կ'անցնէր...

### ԱՆՏՐԵ ԼԱՀՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՏՐԻԱՆԱ ՔԱՐԱՄՊԵՕՆ

Լիբանանի Առաջին տիկինը՝ Անտրէ Լահուտ, վերջին ընդունեց միջազգային կարմիր խաչի դեսպան Ատրիանա Քարամպէօն, որ նաեւ նշանաւոր մանրէրէն է եւ կինը՝ Ֆուլպիոյիստ Քրիսթիան Քարամպէօյի:

Նշենք, որ Ատրիանա հինգ տարի է ի վեր դեսպանի այս պաշտօնը կը վարէ, ան շատ պատուըրած կը զգայ, մանաւանդ որ մանկութենէն կարօտեալներուն օգնելու փափաքը եւ սէր արթնցած է իր մէջ:



Նշանաւոր մանրէրէր նախապէս բժշկութիւն կ'ուսանէր, անոր մայրը բժիշկ, իսկ մեծ մայրը հիւանդապահուհի եղած են. այս միջավայրին մէջ ան շատ բնական կը գտնէ, որ իր մէջ վառ մնացած ըլլայ մարդոց օգուակար դառնալու կոչումը:

Նկարին մէջ կը տեսնենք Անտրէ Լահուտը Ատրիանային գիրքը նուէր ստացած պահուն:

## ՍՏՈՒԳԵՆՔ ՄԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

### ԾԻՇԴ ԵՒ ՍԽԱԼ ԿԱՐԾԻՔՆԵՐ՝ ՈՒՔԵԼԻՑ ԸՄՊԵԼԻՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

#### ԱԼՔՈԼԸ ՇԱՏ ԱՐԱԳ ԿԵ ՏԱՐԱԾՈՒԻ ՄԵՐՄԵՆ ՄԵՉ:

ԾիՇԴ. անիկա անմիջապէս կ'անցնի արիւնին մէջ եւ կը տարածուի միւրոզը մարմնին մէջ: Ծառած անձին մօտ առաւելագոյնը մէկ ժամուան ընթացքին իր ազդեցութիւնը կը գործէ, իսկ անօթի անձին մօտ՝ կէս ժամուան ընթացքին:

#### ԲԱԺԱԿ ՄԸ ԿԱՐՄԻՐ ԳԻՆԻՆ ԿԵՍ ԲԱԺԱԿ ԳԱՐԵԶՈՒՐԻ ՀԱՄԱՉՕՐ Է:

ԾիՇԴ. բոլոր ոգելից բնութիւնները ալբոլի նոյն չափը չունեն: Այսպէս, բաժակ մը կարմիր գինին համազօր է կէս բաժակ գարեջուրի, բաժակ մը շամփանիայի, բաժակ մը փորթոյի, բաժակ մը ռիսքի, բաժակ մը քոնիակի: Հոս յիշեցնենք, որ վերոյիշեալ խմիչքներէն իւրաքանչիւրը ունի իրեն յատուկ բաժակ եւ լեցնելու չափ:

#### ՈՒՔԵԼԻՑ ԸՄՊԵԼԻՆԵՐԸ Կ'ԱՉՂԵՆ ՄԵՐ ՏՐԱՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ:

ԾիՇԴ. առաջին հերթին ալբոլը որոշ «երջանկութիւն» կը պատճառէ եւ տրամադրութիւն կը բարձրացնէ, բայց ժամանակ մը ետք կ'ազդէ մեր կենսունակութեան վրայ՝ պատճառելով խօսակցութեան եւ շարժումներու դանդաղեցում, յիշողութեան եւ կեդրոնացումի նուազում եւս յին:

#### ՅԵՏԵԼԵԱՐ ՈՂԵԼԻԿ ԵՐԱՅԻՆ ԿԵՍ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԶՊԱՅՐԸ ԵՒ ԶԱՓԱԼՈՐԵԼ ԳԱՅԻՆ:

ՅԵՏԵԼԵԱՐ ՈՂԵԼԻԿ ԵՐԱՅԻՆ ԿԵՍ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԶՊԱՅՐԸ ԵՒ ԶԱՓԱԼՈՐԵԼ ԳԱՅԻՆ: ՅԵՏԵԼԵԱՐ ՈՂԵԼԻԿ ԵՐԱՅԻՆ ԿԵՍ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԶՊԱՅՐԸ ԵՒ ԶԱՓԱԼՈՐԵԼ ԳԱՅԻՆ:

#### ՅՂՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ ՊԵՏԵ ԳԱՎՐԵՑՆԵԼ ԱԼՔՈԼԸ:

ԾիՇԴ. որովհետեւ անիկա վնասակար կը դառնայ արգանդին մէջ կազմաւորուող մանուկին եւ ապագային առողջական վերաբերմանը կը ստեղծէ անոր մօտ:

#### ՈՒՄՊ ՄԸ ՕՂԻՆ ԿԱՄ ԳԻՆԻՆ ԶԻՎՆԱՍԵՐ ՓՈՔՐԵՐՈՒՆ:

ՍԽԱԼ. յաճախ հայրերը ուժով մը օղի կամ գինի կ'առաջարկեն իրենց զաւակներուն, յատկապէս՝ մանչուկներուն: Ասիկա սխալ երեւոյթ է, որովհետեւ մանկաբուժներուն եւ հոգեբաններուն կարծիքով, կրնայ սովորութեան վերածուիլ եւ փոքրիկին մօտ կախեալութիւն մը ստեղծել, հետեւաբար ծնող մը երբեք խմիչք պէտք չէ առաջարկէ իր զաւակներուն:

### ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ



«Ազգակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար) պաշտօնակալ թուղթի վրայ, եւ՝ հաստատուած՝ ներկայացնել «Ազգակ»ի ծանուցումներու գրասենեակը:



# ՄԱՐԶԱԿԱՆ



# ԱՇԽԱՐՀ



## ԲԱՆԱՆՑ ԵՒ ՇԻՐԱԿ

ԱՅՍՕՐ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻՆ ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.Ի  
Ա. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՑՈՒՄԵՐՈՒՆ

ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.Ի ֆուտբոլի մրցաշարքին Ա. հանգրուանի երթի մրցումներուն, այսօր տեղի պիտի ունենան բազմաթիւ ճակատումներ, որոնց կարգին մրցումներ ունին կատարելիք հայկական երկու խումբեր՝ Բանանց Երեւան եւ Շիրակ Գիւմրի: Բանանցի մրցակիցը պիտի ըլլայ Հափոնէլ Թէլ Աւիւ (Բարայէլ), իսկ Գիւմրիի մրցակիցը՝ Նիոսիէնտըր (Դանիա): Անոնք երկուքն ալ իրենց մրցումները պիտի կատարեն Հայաստանէն դուրս:

Սկզբունքով, Հափոնէլ Թէլ Աւիւ մրցումը տեղի պիտի ունենան Բարայէլի մէջ, սակայն նկատի ունենալով, որ հոն կը տիրէ անապահով կացութիւն, մրցումը տեղի պիտի ունենայ Ռոթերտամի մէջ (Հոլանտա): Շիրակ իր մրցումը պիտի կատարէ Դանիոյ մէջ:

Հակառակ անոր որ դարձի մրցումները տեղի պիտի ունենան Հայաստանի մէջ, սակայն հայկական Կոյա խումբերն ալ պիտի փորձեն լաւ արդիւնք արձանագրել օտար դաշտերու վրայ, դարձին (28 Օգոստոսին) որեւէ դժուարութիւններ չունենալու համար:


## ԼՈՒՐԵՐ՝ ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԷՆ

● ՀԱՅԱՍՏԱՆԻ ֆուտբոլի ազգային խումբի ռումանացի մարզիչ Միհայ Սթոյցօ յառաջիկայ Օգոստոս 20ին Թուրքմենիստանի դէմ տեղի ունենալիք ֆուտբոլի բարեկամական մրցումին համար իր կազմէն ներս նկատի առաւ քանի մը նորեկ մարզիկներ: Անոնց կարգին են՝ Նիքոլայ Կիփալուկ (Բանանց Երեւան), Անատոլի Մորոպով (Ռուսոբով), Թուսոր Զիշու եւ Գալուստ Պետրոսեան (Փիւնիկ Երեւան):

● ՅԻՅԱԿԻՆ կողմէ նկատի առնուած միջազգային իրաւարար՝ Կարէն Նալպանտեան ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.Ի ն կողմէ երէկ նշանակուեցաւ յառաջիկայ Վեպտեմբեր-Տին Մոֆիսի մէջ (Պուլկարիա) տեղի ունենալիք Պուլկարիա - Էսթոնիա Եւրոպայի երիտասարդներու ախոյեանութեան մրցումին կեդրոնի իրաւարար:

ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.Ի յայտարարեց նաեւ, որ յառաջիկայ Վեպտեմբեր 9ին կայանալիք Մոլտաւիա - Պիեթրոուսիա Եւրո - 2004ի Կոուսի մրցումին, որ տեղի պիտի ունենայ Քիշինեւի մէջ (Մոլտաւիա), Հայաստանէն Գէորգ Յովհաննիսեան պիտի ըլլայ ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.Ի ն ներկայացուցիչը:

## ԺԱՐՏԷԼ ՄԻԱՑԱԻ ՊՈԼԹԸՆԻ



Ժարտել

29 տարեկան ժարտել 2002 - 2003 եղանակին իր ակումբին՝ Սփորթինկ Լիպոնի հետ 42 կոլ նշանակելով շահեցաւ Փորթուգալի ախոյեանութիւնը: Ամբան ընթացքին սակայն անոր կազմը չուզեց նորոգել անոր պայմանագրութիւնը: Նախքան Սփորթինկին միանալը, ան մաս կը կազմէր Փորթոյին, որուն հետ 146 մրցումի ընթացքին նշանակեց 150 կոլ:

Ժարտել, հակառակ անոր որ ծնած է Պրաչի, այսուհանդերձ նկատի ունենալով, որ ան փորթուգալեան անցազիր ունի, Պոլթընի հետ դաշտ ներկայանալու համար գործի աշխատանքի արտօնագիրի (այս պարագային ֆուտբոլ) պէտք չունի:

Անցեալ Յունիսէն ի վեր Ռէյնալդը պիտի տաքթորուած էր ժարտելով, սակայն նկատի ունենալով, որ Ռէյնալդը պիտի 1,5 միլիոն փաունտ կ'առաջարկէր, Սփորթինկ համաձայն ֆուտբոլի սկզբնական սկզբնական կազմին ծախել ժարտելը:

Նշենք, թէ Շարթը, 16 Օգոստոսին ան առաջին անգամ պիտի կրէ Պոլթընի շապիկը, երբ անոր կազմը Անգլիոյ Գորթուալի դասակարգի ախոյեանութեան 2003 - 2004 եղանակի բացման մրցումին, «Օլտ Թրէֆրտ» մէջ, հիւրը պիտի ըլլայ Մանչեսթըր Եունայթեդի:

## ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄ ՍԿՍԱԻ ՄԻՆՍԻՆԱԹԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Մինսինսթի մէջ (Օհայօ, Մ. Ն.) տեղի ունեցող տղոց թենիսի Մասթըրսի միջազգային մրցաշարքին մասնակցող արձանիւհայ Դաւիթ Նալպանտեան յաղթանակով սկսաւ մրցաշարքը, երբ 6 - 0 եւ 6 - 4 արդիւնքով պարտութեան մատնեց արտարախացի Ռէյնա Արթըրը:

Ա. հանգրուանի մրցումները սակայն այդքան ալ բախտաբեր չեղան սպանացիներուն համար, որովհետեւ սպանացի հինգ մարզիկներ դուրս մնացին մրցաշարքէն: Մեծագոյն անակընկալը ստեղծեց պեճիքացի Չաիէ Մալիսէ, որ 3 - 6, 6 - 4 եւ 6 - 2 արդիւնքով պարտութեան մատնեց մրցաշարքին Տրո դասուած՝ արտարախացի Էյթըն Հոլթը:

Ստորեւ՝ Ա. հանգրուանին արձանագրուած կարգ մը կարեւորագոյն մրցումներուն արդիւնքները. **Ռոմէ Յետերեր (Չուիցերիա, 3րդ) - Սթը Տրէֆըր (Աւստրալիա) 4 - 6, 6 - 3 եւ 7 - 6** **Մարտի Յիշ (Մ. Ն.) - Մարք Յիլիփուսի (Աւստրալիա) 1 - 6, 6 - 3 եւ 6 - 4**

Խուան Բարյոս Յերերօ (Սպանիա, 2րդ) - Նիքոլայ Տաիտենքօ (Ռուսիա) 6 - 0 եւ 6 - 2 **Եւգենի Բաֆէնիքով (Ռուսիա) - Ժան - Մալքի Կամպիլի (Մ. Ն.) 6 - 4 եւ 6 - 4**


Էնտի Ռոտիք (Մ. Ն., 7րդ) - Յետնանտօ Վերտաքօ (Սպանիա) 6 - 3 եւ 6 - 2 **Մարիանօ Չապայեթա (Արժանթին) - Կուսթաօ Քուէրթէ (Պրաչի, 14րդ) 6 - 4 եւ 6 - 0** **Ռայնըր Շուրլըր**



Նալպանտեան

(Գերմանիա, 8րդ) - Շթեֆան Բուպէք (Աւստրալիա) 6 - 2 եւ 7 - 5 **Մարք Միրնիյ (Պիեթրոուսիա) - Ալեքս Բորթիա (Սպանիա) 3 - 6, 6 - 3 եւ 7 - 6**

Ա. հանգրուանին իրենց կատարած մրցումներուն, չորս ռուս մարզիկներ Լինա Բրասնորոբցալա, Նատիա Փետրովա (14րդ), Էլենա Պովինա



Մալիսէ

● ԹՐՈՒՆԹՈՅԻ մէջ (Քանադա) տեղի ունեցող աղջկանց թենիսի միջազգային մրցաշարքին Բ. հանգրուանին իր կատարած մրցումին ճող դասուած պոլկարացի Մալիսէնա Մալիսէն 2 - 6, 6 - 3 եւ 6 - 4 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք սպանացի Մալի Սեռնայէն, դուրս մնաց մրցաշարքէն:

(Մէքի) եւ Էլենա Լէխովսեա յաղթանակներ արձանագրելով ապահովեցին Բ. հանգրուանին իրենց տոմարը: Անոնց չորսէն կարեւորագոյն յաղթանակը արձանագրեց Բրասնորոբցալա, որ 6 - 0, 3 - 6 եւ 7 - 5 արդիւնքով պարտութեան մատնեց 13րդ դասուած Էլենի Տանիլիտուն (Յունաստան):

## ՖԵՐԿԸՍԸՆ ԼԱԻ ԱՐԴԻԻՆՔՆԵՐ Կ ԱԿՆԿԱԼԷ ԻՐ ՆՈՐ ՄԱՐԶՈՒԿՆԵՐԷՆ

Մանչեսթըր Եունայթեդը երէկ պաշտօնապէս ներկայացուց իր երկու նորեկ մարզիկները՝ Քրիսթիանօ Ռոնալտօն եւ Քլեյբըրքը, որոնք օր մը առաջ միացած էին Անգլիոյ ախոյեանին:

Իր նորեկ մարզիկները ներկայացուցելով, մարզիչ Ալեքս Ֆերկըսը թաւ. «Յունիսէն հետագած մարզիկներուն փոխարէն, յաջողեցանք մեր կազմը օժտել երկու նորեկով, որոնք կը նկատուին սքանչելի մարզիկներ: Շատ ուրախ եմ, որ անոնք միացան մեր կազմին, որովհետեւ լաւագոյն ծանօթ եմ անոնց յաղթանակներուն եւ լաւ արդիւնքներ կրնամ ակնկալել անոնցմէ»:

24 տարեկան պրաչիի Քլեյբըրքը եւ 21 տարեկան փորթուգալցի Քրիսթիանօ Ռոնալտօն իրենց կատարած լաւ աւարտութիւններուն ընթացքին գոհունակութիւն յայտնեցին Մանչեսթըր Եունայթեդին իրենց միացման համար:

Ֆերկըսը փորթուգալցի Ռոնալտոյի տուաթի 7 շապիկը, որ նախապէս կը կրէր Տէլ-Վիտ Պեթիամ: Նշենք, թէ նախապէս այդ շապիկը կրած է նաեւ Պրաչիի Ռոնալտօն եւ Էրիք Քանթոնա: Սպանական մամուլին համաձայն, Մանչեսթըր Եունայթեդը կը



Չախէն աջ՝ Էլեպըրքը, Ֆերկըսը եւ Ռոնալտօ

փորձէ նաեւ իր կազմին միացնել Ռէյ Մատրիտի յետասպահ Միշէլ Սալկատուն:

Անգլիական կազմը հետաքրքրուած է նաեւ Պարսելունայի մաս կազմող Քարլոս Փիլոյով:

## ՄԱԲԱՅ ՊԱՇՏՕՆԱՊԷՄ ՄԻԱՑԱԻ ՊԱՅԻՐՆԻ

Գերմանիոյ ախոյեան Պայէրն Միւնիխ երէկ իր ակումբին մէջ պաշտօնապէս ներկայացուց հոլանտացի յառաջապահ Ռոյ Մաքայը, որ թիւ մը երկար տեւած բանակցութիւններէ ետք ի վերջոյ անցեալ շաբաթավերջին Տէլփորթիօ Քորունայէն միացաւ Պայէրնին, փոխան շուրջ 19 միլիոն եւրոյի:

Սկզբունքով, Պայէրն 28 տարեկան մարզիկին համար սպանական կազմին պէտք է վճարէր 18 միլիոն եւրո, սակայն գերմանական կողմը յօժարեցաւ յաւելել մէկ միլիոն եւրո վճարել, անոր փոխանցման ծախսերուն համար, նկատի ունենալով, որ երկու ակումբներուն էլ Մաքայի նախկին ակումբին՝ Վիլիս Անհէմի միջեւ կարգ մը խոչընդոտներ անլուծ կը մնային: «Մէկի համար այս հարցը այլեւ փակուած կը համարուի: Տէլփորթիօն Քորունայի դէմ որեւէ բողոք չենք ուզեր ներկայացնել եւ ոչ ալ այս հարցը հասցնել միւրեւ ՏիՅԱՍ, ըսաւ Պայէրնի պատասխանատուներն Ուլի Հեօնէս:

Մաքայ, որ չորս տարուան պայմանագրութիւն մը ստորագրեց Պայէրնի հետ, այսպիսով կը դառնայ այս եղանակի ակումբին միացած ամենէն կարեւոր մարզիկներէն մէկը:

## ԶՈՒԻՑԵՐԻԱ - ՅՐԱՆՍԱ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

Յառաջիկայ Օգոստոս 20ին, Ֆրանսիայի ֆուտբոլի ազգային խումբը միջազգային բարեկամական մրցում մը պիտի կատարէ Զուիցերիոյ դէմ, ժրնէի մէջ:



Սաքթի

Միջցամաքամասային ֆուտբոլի մրցաշարքին (անցեալ Յունիսին) Ֆրանսիայի կազմէն տարբեր պատճառներով բացակայած Փարիք Վիէրա, Ջինէտին Զիտան, Բլոստ Մաքելեյէ եւ Տաիտ Թրեպէլէ այս մրցումին պիտի վերադառնան ազգային խումբը:

Հակառակ անոնց վերադարձին, Ֆրանսիայ պիտի ունենայ այլ բացականեր, որոնք վիրաւոր ըլլալով նկատի չեն առնուած մարզիչ Շար Սանթիսի կողմէ: Նշեալ մարզիկներն են՝ Ուիլիլմ Կալա, Շըրոմ Ռոթէն եւ Սիտի Կոլոն:

Սանթիսի իր կազմէն ներս նկատի առաւ նաեւ Զելսիի յետասպահ Էմանուէլ Փրօն, նկատի ունենալով, որ ան տակաւին ամբողջութեամբ չէ ապաքինած անցեալ Մալիսին իր վիրաւորութիւնէն ետք: 32 տարեկան Փրօնի պիտի բացակայի նաեւ յառաջիկայ Սեպտեմբերի Կիպրոսի եւ Սլովենիոյ դէմ տեղի ունենալիք «Եւրօ - 2004»ի Կոուսի մրցումներէն:

Ճապիէն Պարթէյ դարձաւ նկատի առնուեցաւ իբրեւ հիմնական բերդապահ, հակառակ անոր որ Մանչեսթըրի մէջ անոր դիրքը վտանգուած է, ամերիկացի նորեկ բերդապահ Թիմ Հաուրթի ծամանումով:

Ստորեւ՝ Սանթիսի կողմէ նկատի առնուած մարզիկները, որոնց ուր մարզիկներ մաս կը կազմեն անգլիական խումբերու. **Բերդապահներ.- Ճապիէն Պարթէյ (Մանչեսթըր Եունայթեդ) եւ Կրէկորի Քուիէ (Լիոն):** **Յետասպահներ.- Մարսիլ Տրսայի (Զելսի), Պիլեպէ Լիսարասո (Պայէրն Միւնիխ), Յիլիփ Մեքսի (Օքսթը), Ուիլի Սանիոլ (Պայէրն Միւնիխ), Միքայէլ Սիլվեսթըր (Մանչեսթըր Եունայթեդ) եւ Լիլիան Յիւրամ (Եւրոպէս):**

**Միջնապահներ.- Օլիվիէ Տաքոր (Ա. Էս. Ռոմա), Լուստիլ ժիլի (Մոնաքօ), Բլոստ Մաքելեյէ (Ռէյ Մատրիտ), Ռոպէր Փիթէ (Արսենալ), Փարիք Վիէրա (Արսենալ), Սիլվէն Ռիթորո (Արսենալ) եւ Զինէտին Զիտան (Ռէյ Մատրիտ):**

**Յառաջապահներ.- Ճիպրիլ Սիսէ (Օքսթը), Թիէրի Հանրի (Արսենալ), Սթի Մալէ (Յունիսէ) եւ Տաիտ Թրեպէլէ (Եւրոպէս):**

## ԶԵԼՍԻ ԿԸ ՓՈՐՁԷ ԶԵՌՔ ԶԳԵԼ ՄԱԲԵԼԵԼԷՆ



Ատրիան Միլիթի

Զելսիի պատասխանատուները երէկ յայտնուած են, թէ պաշտօնապէս դիմած են Ռէյ Մատրիտին, փորձելով իրենց կազմին միացնել ֆրանսացի միջազգային միջնապահ Բլոստ Մաքելեյէն, յայտնեց այս վերջինին գործակալը՝ Մարք Ռոմէր:

Ճապիէն Պարթէյ, 30 տարեկան Մաքելեյէ 2000ին միացած էր Ռէյ Մատրիտին, երկու եղանակ Սելթա Վիլիոյին մաս կազմելէ ետք: Նախքան Սպանիա իր մեկնումը, ան մաս կը կազմէր ֆրանսական Նանթը:

Սպանական մամուլին համաձայն, Ռէյ մտադիր չէ ծախել Մաքելեյէն, որ մինչեւ 2006 թուական պայմանագրութիւն մը ստորագրած է սպանական կազմին հետ: Այսուհանդերձ, Սպանիոյ ախոյեանին պատասխանատուները կը յայտնեն, որ թէ անոր համար աւելի քան 90 միլիոն ամերիկեան տոլար գումար մը առաջարկուի, պարտատեւ ընդունելու անգլիական խումբին կամ այլ կողմերու առաջարկը: Անցող քանի մը օրերուն Փարմայէն Զելսիի միացած ռումանացի միջազգային յառաջապահ Ատրիան Միլիթի, որ երէկ ենթարկուեցաւ բժշկական յաջող քննութիւններու, կը սպասէ միայն իր գործի արտօնագիրին:

Զելսիի պատասխանատուները կը յայտնեն, որ արտօնագիրի հարցը պիտի լուծուի մինչեւ շաբաթավերջ, որպիսի 24 տարեկան ռումանացի կարենայ իր մասնակցութիւնը բերել յառաջիկայ Կիպրոսի, 17 Օգոստոսին տեղի ունենալիք Լիվրփոլ - Զելսի մրցումին (Անգլիոյ ախոյեանութիւն):

